

ՄԱՐԶԻԿ

հսլս

Մարզիկ

مجلة رياضية شهرية
تصدرها جمعية الهومنتمن بيروت

marzig

SPORTS MAGAZINE

հիօ՝ ՏԱՐԻ, 2010, ԹԻԻ 6-7 (336-337) - VOL. XXIX N° 6-7 السنة التاسعة والعشرون - العدد السادس - السابع

ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ Գ-ՐԴ ԲԱՆԱԿՈՒՄ



« ԳՈՐԾԵՆՔ ՄԻԱՍԻՆ »



ԲԱՅԱՌԻԿ ԱՅՍ ԹԻՒՆ



4

Բացում



10

Յարգանքի փոխք



14

Սրբառուչ պահեր



22

Տաղաւարներ



28

Պաշտօնական հիրեր



31

Տեսակցութիւն



42

Խարուիսահանդէսներ



44

Պարգաններ



57

Լուսարչակի փակ



«ԵԿԱՆ, ՏԵՍԱՆ, ՅԱՂԹԵՑԻՆ»

Փոխ առնելով նշանաւոր հռոմէացիին բառերը, **Յ.Ս.Ը.Ս.**ական սկաուտ մը այս բառերով կը փակէր օրագրութիւններուն իր վերջին էջը, համա-**Յ.Ս.Ը.Ս.**ական 9րդ բանակումի աւարտին:

Ինչքա՛ն պարզ ու հարազատ բնութագրում համա-**Յ.Ս.Ը.Ս.**ական այն մեծ իրադարձութեան, որ ութ օրեր շարունակ, 18 երկիրներէ 600 բանակողներ համախմբեց Արագածի լանջին, Բիրականի բանակավայրին մէջ, համագային ոգելորութեան եւ միութենական խանդավառութեան նախանձելի մթնոլորտի մը մէջ:

Եկա՛ն բոլորը, սկաուտական շարքերու վաստակաւորներն ու նորընծաները: Մեծերը՝ սկաուտական «Արարատեան» կարգ ստանալու եւ պատասխանատու պաշտօններ վարելու համար, կրտսերները՝ մեծերու հմայքին տակ սկաուտական իրենց առաջին քայլերը նետելու համար:

Եկա՛ն հազարումէկ դժուարութիւններ յաղթահարելէ ետք: Նիւթականը եթէ գլխաւորն էր այդ դժուարութիւններուն, ապա ընտանիք-գործ-արծակուրդ զոհելու դժուարութիւնը նուազ արհամարհելի չէր, հաճոյասէր եւ նիւթապաշտ շրջապատի մէջ հասակ նետող սերունդի մը համար: Ու որքա՛ն ծիգ ու աշխատանք պէտք եղաւ, որ պէսզի **Յ.Ս.Ը.Ս.**ի վարչութիւններ կարենան նման ծախսալից բանակումի մը պատուիրակութիւնները կազմել, ա-

նոց նիւթականին ապահովման մասնակցիլ եւ ոեւէ մէկը չգրկել ազգային-միութենական կարեւոր նախաձեռնութեան մը դաստիարակիչ ներկայութենէն:

Եկա՛ն բոլորը, ու իրենց հետ բերին իրենց գաղութներուն կարօտն ու ողջոյնը մայր հայրենիքին: Իւրաքանչիւրը կտոր մը հայութիւն, եկաւ գտնելու ամբողջական հայութիւնը, զօրե՛ղ, ջերմ ու հոգեգրաւ:

Իբրեւ ուխատաւոր եկա՛ն ու տեսան այն ինչ որ տարիներ սրտի թրթիռներով ապրած էին, հոգիի ու մտքի ծախրանքներով երազած էին: Օտար բան չըկար իրենց համար: Հայոց պատմութիւնը ապրող ներկայութիւն էր այնտեղ: Իւրաքանչիւր քայլափոխի հերոսի մը ածիւնը գտան անոնք, հայ մեծագործի մը հետքը, յիշատակը: Անցեալը ինքնաձանաչման զրահը տուաւ իրենց: Խթանեց որոնելու ներկան եւ գրտնելու իրենց ապագան ճշդող ուղին:

600 բանակողներ, սկաուտներ թէ պատասխանատուներ, տեսան կենարար հողը, հաստատեցին հողի ուժին իմաստութիւնը եւ խոր արմատներ նետած այդ հողին մէջ՝ վերադարձան իրենց երկիրները նոր ծիլեր արծակելու համար:

Բանակողները տեսան **Յ.Ս.Ը.Ս.**ը իր իսկական դիմագիծով. մեծ, ընդգրկող՝**ԻՆ**, համահայկական, բոլորին հետ ըլլալու, բոլորին համար ըլլալու իր դերակատարութեամբ:

Ու բոլորով մէկ միացած՝ զօրացան

անոնք: Ամրացան իրենց հայկականութեամբ, գօտեպնդուեցան իրենց Հ.Ս.-Ը.Ս.ականութեամբ եւ պարտութեան մատնեցին իրենց միութիւնն ու ազգը տկարացնել փորձող ուժերը:

Անոնք յաղթեցին իրենց անհատական ետերուն, երբ հոգիներէն վանեցին ազգային ստորակայութեան ամէն բարդոյթ եւ հայօրէ՛ն տոկալու, խրոխտ ու բարձրաճակատ ապրելու անդառնալի ուխտը կատարեցին էջմիածինի, Սարդարապատի ու Ծիծեռնակաբերդի մէջ:

Անոնք յաղթեցին իրենց տեղական-տեղայնական պայմաններուն, երբ գաղութային մտայնութիւնները մէկ կողմ ձգելով՝ ընտրեցին ամբողջական հայութեան պատկանելու եւ ամբողջական հայրենիքին համար ապրելու ուղին:

Անոնք յաղթեցին իրենց սերնդակիցները այլասերումի եւ ձուլումի մատնող ճիգերուն, երբ Հ.Ս.Ը.Ս.ականութիւնը գիտակցական ապրումի վերածելէ ետք՝ որոշեցին այդ ապրումը վերածել ամէնօրեայ գործի: Հայասպահպանման անհատնում ճիգի: Միութենական անվերջ նուիրումի:

Այդ յաղթողներէն մէկը, Հ.Ս.Ը.Ս.ի նաւը լերան վրայ հասցնելու «խենթութեամբ», պատմութիւն երկնեց, երբ «Արարատեան» կարգ ստանալէ եւ բանակումի ազգային-միութենական մթնոլորտով յագենալէ ետք, երեք շաբաթ անց, բացառիկ սխրանքով մը Արարատ լեռը մագլցեցաւ, Հ.Ս.Ը.Ս.ի նրկական դրօշը անոր կատարին կոթողեց եւ իր յաղթանակը համա-Հ.Ս.Ը.Ս.ական Զոր բանակումի մասնակիցներուն նուիրելէ ետք, հպարտօրէն երգեց «Յառաջ նահատակ»ը, ցեղասպան քուրքին երեսին շարտելով Հ.Ս.Ը.Ս.ի մեծագոյն յաղթանակը:

Պատիւ յաղթող սերունդին:

Փա՛ռք նման սերունդներ ծնող ժողովուրդին:





Բացման և բանավարձման ակտիվության հիմնական հարցերը ՀԱԸՄ-ի Կեդրոնական Վարչության անդամներն են քննարկում և որոշումներ կայացնում ակտիվները:



Արագածի լանջին, իրենց հայեացքը ուղղած վեհ Արարատին, Բիւրականի Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.-Ս.Կ.ի բանակավայրէն ներս 555 հայորդիներ դարձան Հ.Մ.Ը.Մ.ի պատմության մեկ նոր էջին արձանագրության վկաները:

Քառամեայ դրութեամբ, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան կազմակերպութեամբ, Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքի սկաուտական միաւորը, 100 մասնաճիւղերով մեծ թիւով սկաուտներ, կը մասնակցի համա-Հ.Մ.Ը.Մ.ական բանակումներու:

Հ.Մ.Ը.Մ.ի համագաղութային կառոյցին ստեղծումէն ի վեր տեղի ունեցած են համա-Հ.Մ.Ը.Մ.ական սկաուտական ութը բանակումներ: Շարքին առաջինը՝ Յունաստան, այնուհետեւ Ֆրանսա, Անգլիա, կրկին Յունաստան, իսկ վերջին չորսը Հայաստան:

Ինչպէս կը նկատենք, սփիւռքեան օժախներ հիւրընկալած են այդ բանակումները, սակայն Հայաստանի անկախութենէն ետք, ինչպէս 1918ին «տուն» կը հրաւիրէր Հ.Մ.Ը.Մ.ը, օրուան կրթական նախարար, մեծ մարդ ու ազգասէր՝ Նիկոլ Աղբալեանի հրաւերով, այնպէս ալ, դուրս դրուած, տարագրուած Հ.Մ.Ը.Մ.ը այս անգամ վերընձիւղուած կը մտնէր Հայրենիք ու կը բազմանար, նոր ծաւալ տալով միութեան երազանքներուն:

Համա-Հ.Մ.Ը.Մ.ական բանակումները, անշուշտ, ինքնանպատակ չեն, այլ ունին հեռանկարներ, ինչպէս կը հաստատէ բանակումին գրքոյկը, որ կը փոխանցուէր իւրաքանչիւր բանակողի: Այդ նպատակներն են.-

- Ի մի հաւաքել Հ.Մ.Ը.Մ.ի զանազան շրջաններու արի-



ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԶՐԴ ԲԱՆԱԿՈՒՄԻՆ ԲԱՑՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՇԵՇՏԷ ՄԻԱՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏՄԱՆՔԻ ԿԱՐԵՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Ներք, արենոյշները, երեցներն ու պարմանուհիները:

- Տալ ազգային ու միութենական դաստիարակութիւն եւ առիթ ստեղծել փոխադարձ ծանօթացման:
- Սատարել Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտութեան միջազգային ծանօթացման:

Համա-Հ.Մ.Ը.Մ.ական բանակումները թէւ կը նպատակադրեն սկուտական կեանքը ապրեցնելու, սակայն հիմնականին մէջ կը ծառայեն համախմբելու, հայահոծ թէ ոչ, սփիւռքեան գաղութներու տարբեր միջավայրերու ու բարբերու ծնունդ տղաքը, որոնք երիտասարդ պետականութեան ու հողէն սնած հայորդիներու հետ միախըմբումով ու համախմբումով, կը սուզուին դէպի ինքնութիւն:

Այս բանակումները, որոնք տեղի կ'ունենան Հայաստանի մէջ, հայրենի հողին վրայ, ունին նաեւ հողն ու



Հայրենիքը շօշափելի դարձնելու բնոյթ: Պատահական չեն ընտրուած այցելութեան վայրերը՝ Ծիծեռնակաբերդ, Սարդարապատ, Էջմիածին՝ հոգեւոր կապեր, վիրաւորուած ու կտրատուած հոգիներու յուշեր, բայց նաեւ՝ փառահեղ յաղթանակ ու արժանապատուութեան վերականգնում: Աւելին, պտոյտներ դէպի վանքեր, եկեղեցիներ, սրբատեղիներ:

Իսկ ի՞նչ պիտի մնան այդ բոլորէն... կարօտ, հպարտութիւն, ուրախութիւն ու մանաւանդ՝ զգուանք:

Ամիսներու նախապատրաստական աշխատանքի ու խմբապետական կազմի ժրաջան գործունէութեան ծրնունդն է համա-Յ.Մ.Ը.Մ.ական 9րդ բանակումը, որ տեղի ունեցաւ 31 Յուլիսէն 8 Օգոստոս 2010, Յ.Մ.Ը.Մ. -Յ.Ա.Ս.Կ.ի Բիւրականի բանակավայրէն ներս: Բանակումին մասնակցեցան 18 երկիրներէ 555 արի-արեւոյշներ, ժամանած Սփիւռքի տարբեր երկիրներէն, ինչպէս նաեւ Հայաստանէն:

Համա-Հ.Մ.Ը.Մ.ական 9րդ բանակումին պաշտօնական բացումը տեղի ունեցաւ Հ.Մ.Ը.Մ.- Հ.Ա.Ս.Կ.ի Բիւրականի բանակավայրէն ներս, Շաբաթ, 31 Յուլիս 2010ի յետմիջօրէին, սկսուողական պաշտօնական տողանցքով:

Հանդիսաւոր արարողութեան ներկայ էին Հայաստանի պետական ակադեմիայի Սփիւռքի նախարարուհի Հրանոյշ Յակոբեան, Ազգային Ժողովի պատգամաւոր Հրայր Կարապետեան, Արագածոտնի մարզի Թեմի Առաջնորդ Մկրտիչ Եպս. Մկրտչեանի ներկայացուցիչ Մամբրէ Բահանայ, Հ.Յ.Դաշնակցութեան Բիւրոյի ներկայացուցիչ Հրանդ Մարգարեան, Հայաստանի Գերագոյն Մարմնի ներկայացուցիչ Սիմոն Սիմոնեան, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբայրներ Գրիգորիս Պողարեան, Կարպիս Գապասագալեան, Միհրան Շիմշիրեան, Գարլոս Ալֆէրեան եւ Յարութիւն Յարութիւնեան, ինչպէս նաեւ այլ հիւրեր եւ Հ.Մ.Ը.Մ.ի համակիրներ:

Բանակումի ընդհանուր հերթապահ եղբ. Ռոմանոս Պետրոսեան փոխանցեց բարի գալուստի խօսքը: Ան ողջունեց բանակողները ու մաղթեց վայելել հայրենեաց հողին վրայ գտնուելու բերկրանքը:

Բեմ հրաւիրուեցաւ բանակումի ընդհանուր խմբապետ եղբ. Օշին Փի-

րումեան, փոխանցելու իր խօսքը: Եղբայրը ուրախութեամբ յայտնեց, թէ ամիսներու նախապատրաստական աշխատանքները ակարտած են արդէն եւ օրը հասած է, որ հպարտութեամբ ու ոգեւորութեամբ գործի վերածուին բոլոր ծրագիրները:

Եղբայրը ողջունեց բանակումին մասնակիցները եւ մաղթեց, որ յառաջիկայ 10 օրերը դառնան եւ ուսուցողական եւ հաճելի:

Եղբ. Փիրումեան իր համոզումը յայտնեց, որ բանակումի օրերուն իւրաքանչիւրին մէջ կը հզօրանայ իր ինքնութեան մէկ մասնիկը կազմող հայը, ազ-



Յ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան խօսքը կը փոխանցէ եղբ. Կարպիս Գապասագալեան:



գալինը եւ հաւատք յայտնեց, որ բանակումին աւարտին այսպէս ըսած «գծիկաւոր» հայ ինքնութիւնը՝ ամերիկահայ, իրանահայ... եւ 18 երկրի հայը կը

միաձուլուի ու կը շեշտուի միայն ՀԱՅ-ը, որ Հ.Մ.Ը.Մ-ի նպատակն է:

Եղբ. Փիրումեան մատնանշեց, թէ բանակումին նշանաբանը՝ «Գործենք

միասնաբար»ը թէեւ բաղկացած է պարզ բառերէ, սակայն ունի խոր իմաստ, գոր պէտք է դառնայ բանակողներուն նպատակն ու գործելակերպը: Եղբայրը իր խօսքը եզրափակեց մաղթելով, որ «ուժերու, եռանդի եւ կարողականութեան միաձուլումով քայլենք յառաջ՝ հայ սկսուտին վայել կեցուածքով ու դաւանանքով»:

Այնուհետեւ իր խօսքը փոխանցեց Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի վարչութեան ատենապետ եղբ. Հրաչ Շմաւոնեան, որ շնորհակտրեց համա-Հ.Մ.Ը.Մ.ական Ցրգ բանակումը: Ան մատնանշեց, որ «Հ.Մ.Ը.Մ-ը սերունդներուն փոխանցած է գորեղ ու առողջ հայ ըլլալու երջանկութիւնը»: Ակնարկելով բանակումին ան ընդգծեց, որ «Այս բանակումը կը դառնայ հզօրացման ազդակ եւ կը նպաստէ Հայաստան-Սփիւռք կապերու սերտացման ու ամրապնդման»: Եղբ. Շմաւոնեան յորդորեց քա-



Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ-ի վարչութեան ատենապետ եղբ. Հրաչ Շմաւոնեան:



Յ.Յ.Դ. Բիւրոյի ներկայացուցիչ Յրանդ Մարգարեան:

ջուլիսին, մատնանշելով, որ «Հայրենի հողի հզորութեան կենսաւիշը ձեր երակներուն մէջ, մեր հնօրեայ եւ նորօրեայ հերոսներուն ուժը ձեր հոգիին ու բա-

զուկներէն ներս, օտար ափերուն կը շարունակուի հոսիլ՝ ձեզ հաղորդելով ազգային արժանապատուութիւն եւ հզորութիւն»:

Ապա խօսք առաւ Հ.Յ.Դ. Բիւրոյի ներկայացուցիչ Յրանդ Մարգարեան: Ան մեկնելով բանակումի նշանաբան՝ «Գործենք միասնաբար» խօսքէն, շեշտը դրաւ միասնական աշխատանքի կարեւորութեան վրայ, «Իբրեւ աշխարհասփիւռ ազգ եւ ժողովուրդ պէտք է գործենք միասին եւ կարող ենք գործել միասին եթէ հետապնդում ենք միասնական նպատակ»:

Հրանդ Մարգարեան ընդգծեց, որ Հ.Մ.Ը.Մ.ը մեր հայկական իրականութեան մէջ համահայկական ամենամեծ

կառույցն է եւ այդ առումով մեծ ընկերներ ունի: Ու աւելցուց, թէ «բոլոր կազմակերպութիւնների միասնական նպատակը պէտք է լինի հայկական պետականութեան միջոցով իրականացնել մեր ազգային նպատակները»:

Հրանդ Մարգարեան շեշտեց, որ հայ ժողովուրդը միացնող շաղախը կրնայ ըլլալ երկու բան՝ Հայ Դատ եւ Հայկական Պետականութիւն: Ան եզրակացուց, ըսելով, թէ այս երկուքով է որ մենք պիտի կարենանք վերածուիլ ազգի եւ զայն հասցնել բարձունքներու:

Այնուհետեւ, բանակումի ընդհանուր խմբապետ եղբ. Օշին Փիրումեան բանակումին փողկապը փոխանցեց Հրանդ Մարգարեանին:

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան խօսքը փոխանցեց եղբ. Կարպիս Գապասագալեան: Եղբայրը առաջին հերթին մատնանշեց նման բանակումի մը վայրին ընտրութեան կարեւորութիւնը՝ հայրենի հողին վրայ, զոր ունի իր նպատակն ու հիմնաւորուած հեռանկարները. ան մնայուն ժամադրավայրն է աշխարհացրիւ Հ.Մ.Ը.Մ.ի սկառտներուն:

Եղբ. Գապասագալեան ընդգծեց բանակումի կարգախօսին՝ «Միասնաբար գործելու» անհրաժեշտ գործօնները. «փոխադարձ հասկացողութիւն, վստահութիւն, ծառայութիւն, պարտաճանաչութիւն եւ կարգապահութիւն», որոնք «անվիճելի գրաւականներն են հաւաքական կեանքի յառաջդիմութեան եւ յաջո-

ԲԱՆԱԿՈՂՆԵՐՈՒ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՊԱՏԿԵՐ

Համա-Հ.Մ.Ը.Մ.ական 9րդ բանակումին կազմը հաշուեց 555 բանակող, մասնակցութեան հետեւեալ պատկերով.-

Արեւելեան Մ. Ն.	80
Արեւմտեան Մ. Ն.	77
Գանատա	71
Հարաւային Ամերիկա	29
Հայաստան	25
Լիբանան	57
Սուրիա	36
Քուէթ	21
Ամման	6
Երուսաղէմ	17
Աւստրալիա	13
Յունաստան	9
Ֆրանսա	13
Պուլկարիա	8
Լոնտոն	40
Ալմէյօ	5
Շուէտ	9
Իրանի Հայ Մշակութային «Արարատ» Կազմակերպութիւն եւ «Սիփան», «Նայիրի» միութիւններ	39



Սփիւռքի նախարարուհի Յրանդ Յակոբեան:

դուլթեան» եւ որուն համար իւրաքանչիւրը պարտաւոր է իր մասնակցութիւնը բերել ընդհանուր բանակումի բոլոր աշխատանքներուն:

Այնուհետեւ, եղբ. Գապասագարեան բանակողները յորդորեց դիտակցօրէն եւ համոզումով գործելու միասնաբար, որովհետեւ «կատարելութիւնն է բարձրագոյն իտէպը կեանքին, իսկ յառաջդիմութիւնն է օրէնքը», ըսաւ ան:

Վերջապէս, ան նշեց, թէ այսօր հաւաքաբար անգամ մը եւս կը վերանորոգենք մեր ուխտը «Արարատի լանջերին բանակում ընել կ'ուզենք...», որովհետեւ «Հ.Մ.Ը.Մ.ի սկսուած քաջ գիտէ, թէ համոզումը կամքին զօրացուցիչ դեղն է. համոզում եւ կամք միացած ժայռեր կը փշրեն ու լեռներ կը հարթեն»:

Ապա, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անունով ան բացուած յայտարարեց համա-Հ.Մ.Ը.Մ.ական Ծրգ բանակումը:

Իր սրտի խօսքը փոխանցելու հրաւիրուեցաւ Սփիւռքի նախարարուհի Հրանոյշ Յակոբեան: Ան բարի գալուստ մաղթեց բանակողներուն, որովհետեւ անոնք եկած են իրենց տունը՝ մայր հայրենիք: Յակոբեան շնորհակալութիւն յայտնեց բոլոր անոնց, որոնք հնարաւոր կը դարձնեն մայր հայրենիքի մէջ նման բանակումի մը կազմակերպումը: Ան հաւատք յայտնեց, թէ «դուք այս օրերին, հայկական հողից, ջրից, արեւից առնելու էք նոր ուժ, նոր լիցք, նոր



«Արարատեան» կարգի արժանացած նախկին խմբապետների Հրանոյշ Յակոբեան, Աւետիս Պերպերեան:

ՀԱՅՐԵՆԻՔԻ ՈՒԺԸ ԶԳԱ

(ՍՓԻՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐ ՀՐԱՆՈՅՇ ՅԱԿՈԲԵԱՆԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ՝ ՄԱՄՈՒԼԻՆ, ԲԱՅՄԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ)

Նման միջոցառումները ինչքանով էք կարելուրում Հայաստան-Սփիւռք գործակցութեան կապերի ընդլայնման, զարգացման առումով:

- Ընդհանրապէս ես կարծում եմ, որ ամենագլխաւոր առանցքը Հայրենիք-Սփիւռք գործակցութեան, դա այն է, որ ըսփիւռքահայերը գան հայրենիք, զգան հայրենիքի ուժը, ոգեւորուեն հայրենիքով, առաւել եւս երիտասարդութիւնը: Եւ ես խորին շնորհակալութիւն եմ յայտնում Դաշնակցական բոլոր կառոյցներին, Հ.Ս.Ը.Մ.ական ակումբներին եւ վարչութիւններին, որոնք այս բանակումները օտար ափերից տեղափոխեցին հայրենիք եւ այսօր 600 հայ երիտասարդներ կարողանում են հայրենիքի ուժը զգալ եւ սա նշանակում է, որ նրանք տանելու են հայկական կրակը, առաւել բորբոքելու այն համայնքները, այն կրթօժախները, որտեղ իրենք սովորում են: Եւ կարծում եմ, որ բոլոր կառոյցներն ու կազմակերպութիւնները այսպիսի ծրագրեր եթէ տարեկան իրականացնեն, նշանակում է որ մենք տարեկան հազարաւոր երիտասարդներին տուն կը բերենք, իսկ տուն գալով նրանք շատ ու մեծ սխրագործութիւններ կը կատարեն, յատկապէս հայ մնալով:



կրակ եւ հայկական կրակը ձեր հոգիներում, ձեր սրտերում տանելու էք հայկական համայնքներ»: Աւարտին, Յակոբեան մատնանշեց, թէ հայ ժողովուրդը, Սփիւռքի թէ Հայրենիքի մէջ, պէտք է մասնակցի հայրենի պետականութեան կառուցման, կերտման, զարգացման ու հզօրացման:

Նախարարուհիին ելոյթէն ետք, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գրիգորիս Պողարեան Կեդրոնական Վարչութեան եւ մասնակիցներուն անունով յուշանուէր մը փոխանցեց Հրանոյշ Յակոբեանին:

Այնուհետեւ, Հ.Մ.Ը.Մ.ի

Կեդրոնական Վարչութեան որոշումին համաձայն, «Արարատեան» կարգ յանձնուեցաւ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի նախկին խմբապետ եղբայրներ՝ Հրաչ Շմաւոնեանին, Աւետիս Պերպերեանին եւ քոյր Լիլիթ Զաքարեանին:

Արագածոտնի Թեմի Առաջնորդի խօսքն ու օրհնութիւնը փոխանցեց Մամբրէ Գահանան, որ վերահաստատեց հայրենի հողին վրայ բանակում կազմակերպելու կարեւորութիւնը, ինչպէս նաեւ շեշտեց Արարատի լանջին բանակում կազմակերպելու յոյսին զօրացումը: Ապա, «Պահպանիչ»ով ան օրհնեց ներկաները:

Համա-Հ.Մ.Ը.Մ.ական Ծրգ բանակումին պաշտօնական բացումը աւարտեցաւ «Յառաջ նահատակ» քայլերգին երգեցողութեամբ:





Յամա- Յ.Ս.Ը.Մ.ական 9րդ բանակումին առաջին օրը՝ Կիրակի, 1 Օգոստոսը եղաւ յատկանշական: 555 բանակողներ, Յ.Ս.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան կողմէ իրենց տրամադրուած փոխադրակառքերով, առաւօտեան, Բիրակահի բանակավայրէն մեկնեցան երեւան:

Խմբապետական կազմը այդ օրուան համար նախատեսած էր շրջագայութեան ազատ ծրագիր, այլ խօսքով՝ անոնց տրամադրուած էին ուղեգիծեր, ընտրովի դրութեամբ այցելութիւններ՝ եկեղեցի (Ս. Սարգիս, Ս. Զօրավար, Ս. Գրիգոր Լուսաւորիչ), թանգարան (պետական թանգարան, Փարաճանովի...) եւ անշուշտ իր տեսակին մէջ ինքնուրոյն՝ «վերնիսած»:

25-30 հոգիէ բաղկացած խմբակներու բաժնուած, բանակողները ունենալով Յ.Ս.Ը.Մ.-Յ.Ա.Ս.Կ.էն առաջնորդներ, կատարեցին իրենց ընտրութիւնը՝ մէկ կամ աւելին:

Յամա- Յ.Ս.Ը.Մ.ական այս բանակումի նախապատրաստութեան ընթացքին մարմիններու մտահոգութեան առանցքը եղած էր նաեւ 9րդ բանակումին տալ խորքային այլ նշանակութիւն՝ ճանաչողական եւ կառուցողական: Այս ազատ պտոյտը կը նըպատակադրէր մարմնաւորել զայն՝ ժողովուրդին հետ շփում, տարազաւոր ներկայութիւն, անմիջականութիւն:



Ճշգուած Ժամուն, խումբերը հաւաքուեցան երեւանի «Ազատութեան» հրապարակը եւ միախումբ ուղղուեցան Ծիծեռնակաբերդ:

Վայրը՝ ինքնին բնորոշիչ իւրաքանչիւր հայու, սակայն էական Հ.Մ.-Ը.Մ.ական մարդու համար, որովհետեւ ան իր շարքերուն մէջ, կակուղ թաթիկէն սկսեալ յաճ ու սորված է, իր գոյութեան վայրին մէջ, իր ապրած երկրին մէջ տարբեր եղած ըլլալու, իր ինքնութիւնը ուրիշներէն զատուած ըլլալու հանգամանքին անդրադարձած է ու հարցադրումներ կատարած, ունենալու այն պատասխանը, թէ ինք զաւակն է

ՅԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ՝ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԷՎՈՒԿԷՍ ՄԻԼԻՈՆ ՆԱՀԱՏԱԳՆԵՐՈՒ ՅԻՇԱՏԱԿԻՄ



նահատակ ժողովուրդի մը, որ դաժան օր մը, հատող հարուած մը արմատախիլ ըրած է տասնեակ հազարաւոր դարերու իր արմատներէն զինքն ու իր պապերը, շարտելով զիրենք այլուր, ձգելով կեանքի հովին ու քմահաճոյքին, ու ինք դարձած է Խորխէ կամ Նաթալի, Արամ կամ Վահագն:

Լուռ, սակայն այնքան խօսուն այդ քարերը Հ.Մ.Ը.Մ-ի սկաուտներուն ունէին պատմելիք, յուշելիք ու մանաւանդ փոխանցելիք՝ զօրիչ ու ամրապնդող ուժ, հաստատակամօրէն վերապրելու ու յարատեւելու կիրք:

Իսկ Հ.Մ.Ը.Մ-ի կեդրոնական վար-



չուլթեան եւ գործադիր մարմնին համար ուրեմն պատահական չէր առաջին առիթով դէպի Միծեռնակաբերդ այցելուլթիւնը:

Աշխարհացրիւ հայորդիներու ներկայացուցիչներ՝ Հ.Մ.Ը.Մ.ի 555 ըսկառուտներ, ընկերակցութեամբ Կեդրոնական Վարչութեան անդամներուն: Կարգապահ, հնազանդ, լուռ ու կուռ շարքերով, տողանցքով ուղղուեցան դէպի յուշահամալիր: Սրտառուչ ու սպաւորիչ քայլարշաւ մը, որ կը մարմնաւորէր մեռելներէն յարուլթիւն առած ժողովուրդն ու անոր ապրելու կամքը:

Հ.Մ.Ը.Մ.ի անունով, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գրիգորիս Պողարեան գետեղեց

ծաղկեպսակ մը, որմէ ետք իւրաքանչիւր սկառուտ անմար կրակին շուրջ դրաւ վարդ մը, իր յարգանքի տուրքը մատուցելով Յեղասպանութեան զոհ գացած մէկուկէս միլիոն նահատակներու յիշատակին:

Հ.Մ.Ը.Մ. իր խօսքը ունէր փոխանցելիք իր անդամներուն, յատկապէս այդ խորհրդաւոր վայրէն ներս: Անոր գեկուցաբերն էր Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Յարուլթիւն Յարուլթիւնեան:

Եղբայրը նշեց, թէ Հ.Մ.Ը.Մ.ը միշտ եւ ամէն ձեռնարկի անպայման յիշած ու յարգած է իր անմեղ նահատակներուն յիշատակը, որովհետեւ «Իւրաքանչիւր



Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամները կ'առաջնորդեն դէպի Միծեռնակաբերդ բանակողներու տողանցքը:



Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան եղբայրներ եւ բանակումի գործադիր մարմնի անդամներ եղեռնի յուշահամալիրին առջեւ:



չիւր Հ.Մ.Ը.Մ.ականի կենսագրութեան մէկ հատուածը անպայման առնչուած է դաժան իրողութեան հետ»: Եղբ. Յարուլթիւնեան ընդգծեց, թէ «Սփիւռքը մեր ողբերգութիւնն է եւ ո՛չ մեր հպարտութիւնը: Բայց եաթաղանէն ծնած Սփիւռքը նաեւ մեր ուժն է, մեր պայքարի, մեր պահանջատիրութեան մարմնաւորումը»: Ան խօսքը ուղղելով բանակողներուն ըսաւ, թէ այլեւս պէտք չէ սգալ, իսկ մենք «Այսօր այստեղ ենք՝ վերականգնելու մեր պահանջատիրութեան ուխտը»: Եզրափակելով իր խօսքը, եղբ. Յարուլթիւն Յարուլթիւնեան ըսաւ, թէ «Մեր վառած խարոյկին լոյսը տեսանելի կը դարձնենք Արարատ լեռան ստորոտին բազմած հրէշին եւ կը փաստենք իր նպատակին սնանկութիւնն ու մեր յարատեւութիւնը, իսկ հայրենեաց մեղմ քամին կը տանի եւ սուրբ լեռան լանջերին կը հասցնի մեր խրոխտ երգին ձայնը՝ Յառաջ նահատակ ցեղի անմահներ»:



Եւ յիրաւի, Հ.Մ.Ը.Մ.ի քայլերգը՝ «Յառաջ նահատակ»ը, նահատակ այս սերունդի, չորրորդ սերունդի զաւակներուն հոգիէն էր որ կ'ելլէր այդ վայրկեանին, իրաւ ու զգայուն, խրոխտ ու պահանջատէր, միեւնոյն փամանակ տխուր ու յուզիչ: Պահեր կան, որոնք սառելու, անմահանալու արժանի են կեանքի մէջ, այդ պահը կ'արժէ թուել անոնց շարքին...


Ովկիանոսի միւս ափերէն հասած սկաուտներ այդ օր արտայայտեցին իրենց սուգը, յուզմունքը, բայց նաեւ՝ պոռթկումը: Անոնք կարիքը ունէին այդ բոլորին, յագեցած վերազառնալու օտար ափեր եւ կարենալ տոկալու համար...

Յեղասպանութեան թանգարանի տնօրէն Հայկ Դեմոյեանի յատուկ դասաւորումով, խումբը առիթը ունեցաւ այցելելու նաեւ թանգարան:

Նոյն կարգապահութեամբ, արի-

արենոյճները շրջեցան թանգարանէն ներս, ուր փաստագրական թուղթերու եւ պատկերներու միջոցով աւելի եւս ծանօթացան իրենց նախնիներու ապրած ողբերգութեան եւ պահանջատի-

րական ոգիով բաժնուեցան այդ «Անլուելի Չանգակատուն»էն:



Յեղասպանութեան թանգարանին մէջ:



ԲԱՆԱԿՈՂՆԵՐՈՒՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ ԷԶՄԻԱԾԻՆ ԵՒ ՍԱՐԴԱՐԱՊԱՏ





Համա-Հ.Մ.Ը.Մ.ական ծրգ բանակումին երկրորդ օրը, Երկուշաբթի, 2 Օգոստոսին, Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտները, համաձայն նախատեսուած ծրագրին, այցելեցին Ս. Էջմիածին: Հայաստանի մէջ քրիստոնէ- ութիւնը պետականօրէն ճանաչում ստանալէն անմիջապէս ետք կառուց- ւած այդ եկեղեցին սրբատեղի է իւրա- քանչիւր հայու համար: Հայ մարդու ոգեղէն կեանքին ան- քակտելի մէկ մասը:

Մինչ համա-Հ.Մ.- Ը.Մ.ական ծրգ բանա- կումին, Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոս առիթը կու տար բանակող արի-արե- նոյշներուն այցելելու Վեհարան, ծանօթա- նալու հոն պահուած գանձերուն եւ մշակու- թային արժէքներուն, այս տարի այդ բախտը չտրուեցաւ համա-Հ.Մ.- Ը.Մ.ական ծրգ բանա-

կումի մասնակիցներուն, Գարեգին Բ. Կաթողիկոսի երկրէն բացակայութեան պատճառով, իսկ Կաթողիկոսին օրուան տեղակալը՝ Նաթան Սրբազանը նոյն գո- րովը զյացաւ ցուցաբերելու Սփիւռքէն ժամանած 555 պատանի-երիտասարդնե- րուն:

Այնուհանդերձ, բանակողները Էջ- միածինի շրջափակէն ներս ապրեցան սրտառուչ պահեր, ունեցան յիշատակի ու հաւաքական խմբանկարներ:

Այդ օր թէեւ հանդիպում տեղի չու- նեցաւ հոգեւորականներու եւ Հ.Մ.- Ը.Մ.ի պատուիրակութեան միջեւ, սա- կայն Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչու- թեան պատրաստած յուշանուէրը, ուղղուած Վեհափառ Հօր, փոխանցուե- ցաւ առ որ անկ է, որպէսզի գտնէ իր արժանի տեղը:

Խրիմեան Հայրիկէն մինչեւ մեր օրե- րու Կաթողիկոսներու տապանաքարերու ծա- նօթութիւնը փոխան- ցելէ ետք սկաուտնե- րուն, վերջինները ուղ- ղուեցան դէպի Սար- դարապատի յաղթա- կան յուշահամալիրը:

Տողանցքով, խում- բը բարձրացաւ դէպի 12 գանգերը առաջնոր- դող սանդուխները, ուր ինքնաբուխ մեկ- նաբանութիւնները, հաւաքական թէ անհա- տական, մարմին ստա-





ցան «Սարդարապատ» յաղթերգի թընդացումով:

Ցեղասպանութեան յուշահամալիրէն ներս յուզուած ու ընկճուած պատանիները այսօր բարձր ու յաղթական երգ ունէին իրենց շրթներուն: Անոնք

Հ.Մ.Ը.Մ.ի քայերգին եւ «Սարդարապատ»ի երգեցողութեամբ ու սկաուտական բարեւոյթ իրենց յարգանքը մատուցեցին 1918ի Մալխեան սխրագործութիւնը իրագործող հերոսներու յիշատակին: Արարատ լեռը, պաշտպան

հրեշտակը Հայաստանի, ձիւնածածկ իր գագաթը ցցած՝ հսկողն ու մասնակիցն էր արարողութեան, կամովին թողնելով որ Հ.Մ.Ը.Մ.ի բանակողները եւս իրենց հետ տուն տանին գինք, անմահացնող ոսպնեակի ներհայեաց ցոլացումով:

ԲԱՆԱԿՈՒՄԻՆ ԳՐՔՈՅԿԸ



Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան կողմէ խնամքով եւ բժախնդրութեամբ պատրաստուած էր գրքոյկ մը, որուն մէջ տեղ գտած էին բանակումին նպատակը, ծրագիրը, Համա-Հ.Մ.Ը.Մ.ական նախկին բանակումներու մասին մանրամասնութիւններ, բայց նաեւ՝ տեղեկութիւններ Հայաստանի տեսարժան ու պատմական վայրերու մասին, որոնց պիտի հանդիպէր ու ծանօթանար համա-Հ.Մ.Ը.Մ.ական 9րդ բանակումին մասնակիցը: Աշխարհագրական տուեալներ ու Հայաստանի

Հանրապետութեան քարտեզը, իբրեւ օգտակար ուղեցոյցներ, բաժնուած էին բոլոր բանակողներուն:

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան եւ բանակումի խմբապետական գործադիր մարմնին կողմէ բաժնուած էին նաեւ բանակումին խորհրդանիշը կրող գագակներ եւ գլխարկներ:

Բանակումին օրերուն, բանակավայրէն ներս հրատարակուեցաւ համա-Հ.Մ.Ը.Մ.ական 9րդ բանակումին օրաթերթ-թերթիկը, նախաձեռնութեամբ եւ խրմ-



ԲԱՆԱԿՈՒՄԻՆ ԲԱՑՄԱՆ ՆԱԽՈՐԴԱԾ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՄԱՍԼՈՅ ԱՍՈՒԼԻՍԸ

Համա-Հ.Մ.Ը.Մ.ական Զրդ բանակումին բացումէն օր մը առաջ, Ուրբաթ, 30 Յուլիս 2010ին, Երեւանի «Ուրբաթ» ակումբին մէջ տեղի ունեցաւ մամուլի ասուլիս մը, որուն մասնակցեցան Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենադպիր եղբ. Կարպիս Գապասազարեան, Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի վարչութեան ատենապետ եղբ. Հրաչ Շմառնեան, բանակումի ընդհանուր խմբապետ եղբ. Օշին Փիրումեան եւ հայրենի մամուլի ներկայացուցիչներ:



անդամ, շեշտելով Հ.Մ.Ը.Մ.ի հեռանկարային աշխատեալաձեւը՝ Հայաստանի մէջ համա-Հ.Մ.Ը.Մ.ական բնոյթի ձեռնարկներ կազմակերպելու:

Այնուհետեւ, բանակումի ընդհանուր խմբապետ եղբ. Օշին Փիրումեան ներկայացուց բանակումին շուրջ տեղեկութիւններ. սկառուտներու թիւ՝ 18 երկիրներէ 555 սկառուտ: Եղբայրը հակիրճ կերպով ներկայացուց նաեւ բանակումին ծրագիրը (այցելութիւններ, ռալի արշաւ, հիւ-

Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ներկայացուցիչ եղբ. Կարպիս Գապասազարեան անդրադարձաւ Հ.Մ.Ը.Մ.ի հիմնադրութեան եւ պատմութեան, համագործակցին կառոյց դառնալու մանրամասնութեան: Եղբայրը ներկայացուց Հ.Մ.Ը.Մ.ի այժմու իրավիճակը՝ 100 մասնաճիւղ 25 հազար

ընկալում բանակավարէն ներս...):

Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի վարչութեան անունով ելոյթ ունեցաւ եղբ. Հրաչ Շմառնեան ու փոխանցեց վարչութեան խանդավառութիւնը բանակումի մասնակիցներու հիւրընկալման առիթով: Եղբայրը մատնանշեց նախկին բանակումներուն եւ Զրդ բանակումին միջեւ գոյութիւն ունեցող որակի դրական տարբերութիւնը՝ վերանորոգուած բանակավար:

ԲԱՆԱԿՈՒՄԻՆ ՕՐԱԹԵՐԹԸ

բազրութեամբ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի վարչութեան:



Թերթիկը բաղկացած էր երկու էջէ եւ ունէր հինգ հոգինոց խմբագրական կազմ, բաղկացած հետեւեալներէն, Լիլիթ Զաքարեան, Անահիտ Եմէնէճեան, Յակոբ Պէրպէրեան, Գէորգ Նալպանտեան եւ Լիլիթ Վարդանեան: Թերթիկը առաջին էջով կը ներկայացնէր բանակավարին առօրեայ անցուդարձերը՝ պատկերներով: Երկրորդ էջին բովանդակութիւնը այլազան էր: Կային բանակողներու այցելութեան վայրերուն մասին հակիրճ տե-



ղեկութիւններ, նաեւ գրութիւններ հայկական արժէքներու, ինչպէս՝ Արարատի, ծիրանի, տուտուկի, խաչքարերու, Մայր Աթոռ Ս. Էջմիածինի, թանգարաններու, Սարգարապատի, ձեռագիրներու, հայկական գորգերու եւ այլ նիւթերու մասին, որոնցմէ հարցումներ կ'ուղղուէին բանակողներուն: Արդիւնքը կը գնահատուէր վրաններու քընուութեան ընթացքին: Թերթիկը ունէր նաեւ խաղ-հարցարաններու եւ հանելուկներու բաժին, որուն մասնակիցներուն թիւը արհամարհելի չէր:

ՍԿԱՈՒՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԲԱՆԱԿԱՎԱՅՐԷՆ ԴՈՒՐՍ **ՔԱՅԼԱՐՇԱԲ ԵՒ ՌԱԼԻ**



Բանակավայրէն դուրս աշխատանքները, այս անգամ ըսկառուտական բնույթի, շարունակուեցաւ Երեքշաբթի, 3 Օգոստոսին:

Երրորդ օրուան յայտագիրը ընդգրկեց քայլարշաւ եւ ռալի: Բանակողները տարիքի համաձայն բաժնուեցան երկու խումբի:

16էն վեր արի-արեւնոյշ, երէց-պարմանուհիները ուղղուեցան դէպի Ամբերդ ամրոցը, քայլարշաւով:


Միջնադարեան բերդաքաղաք եւ ամրոց Ամբերդը կը գտնուի պատմական Արագածոտն գաւառին մէջ, Արագած լեռան հարաւային լանջին:

Բանակավայրէն 10 քիլոմեթր հեռաւորութեան վրայ «ամպերու մէջ գտնուող ամրոց» հասնելու համար, արշաւին մասնակիցները անցան կիրճերէ ու արահետներէ:

Հետաքրքրական էր արշաւողներուն պատկերը. ո՛չ յոգնութեան նշան, ո՛չ տրտունջ, հակառակ անոր որ մասնակիցներուն մեծամասնութիւնը իր առօրեայէն ամբողջութեամբ տարբեր իրավիճակի մը առջեւ կը գտնուէր. նմանօրինակ ճամբաներ յաճախակիօրէն չէ որ կը կտրենք...:

Միջնադարեան ամրոցի եւ Ս. Աստուածածին եկեղեցւոյ տրուած այցելու-





Թեևնէն ետք անոնք վերադարձան բանակավայր:

Երկրորդ խումբը՝ սկաուտական ռալիի մասնակիցները քայելով եւ հետախուզական նշաններու հետեւելով կատարեցին իրենց առաջարկուած խաղերը: Այս ռալին առիթ դարձաւ, որպէսզի սկաուտական խաղերու կողքին, անոնք ծանօթանան հայկական գիւղերու ու անոնց կենցաղին: Այսպէս, սկաուտներ հաց թխեցին ու թոնիրի հաց եփելուն ծանօթացան, օճախի վրայ ճաշ պատրաստեցին, նաեւ պատգարակ սարքեցին, պատասխանեցին խմբապետական կազմին կողմէ պատրաստուած ու նախապէս շրջաններու ղրկուած զարգացման մրցումներու հարցումներէն մէկ բաժնին:

Ռալին տեղի ունեցաւ Բիւրականի շրջանի Փարպի, Ղազարաւան եւ Բագմաղբիւր գիւղերուն մէջ:

16 խումբերու միջեւ խաղ-պայքարը





աւարտեցաւ հետեւեալ խումբերու յաղթական պատկերով: - առաջին՝ Լիրանան, երկրորդ դիրքը գրաւեցին Գանատայի պատուիրակութենէն երկու խումբեր (հաւասար արդիւնք), իսկ երրորդ տեղը՝ Արեւելեան Միացեալ Նահանգներ:

Երեկոյեան, երբ երկու տարբեր աշխատանքներ կատարած բանակիցները կը հաւաքուէին, շատ բան ունէին իրարու պատմելիք...:

Այդ օր, առաւօտեան, բանակավայրէն ներս տեղի ունեցաւ դասախօսութիւն մը՝ Հ.Օ.Մ-ի գործունէութեան մասին: Իբրեւ ոչ-կառավարական կազմակերպութիւն, Հ.Օ.Մ-ի ծաւալած աշխատանքներուն մասին ելոյթ ունեցաւ քոյր Թային Հինտոյեան (Արեւմտեան Միացեալ Նահանգներէն):



ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԳՐԴ ԲԱՆԱԿՈՒՄԻ ՔԱՅԼԵՐԳ



**Առողջ միտք եւ առողջ մարմին,
Ջինջ ուղին է Հ.Մ.Ը.Մ.ի:
Հայութեան դատին, նուիրուած ու միշտ քաջ,
Սերունդներ են կրթուել այս ծամբին:**

**Քառեակ տարի մէկ հաւաքում,
Մեր փողկապները միացնում:
Նուիրական խօսքով, սկառուտի հոգով,
Գործում ենք միասին անդադար:**

**Բանակում, եղբայրութեան աղբիւր,
Բանակում, շողշողիր ամէնուր:
Բանակում, բանակում,
Մի՛շտ պատրաստ, «Բարձրացի՛ր-բարձրացուր»:**

**Հ.Մ.Ը.Մ., եղբայրութեան աղբիւր,
Հ.Մ.Ը.Մ., շողշողիր ամէն ուր:
Հ.Մ.Ը.Մ., Հ.Մ.Ը.Մ.,
Մի՛շտ պատրաստ, «Բարձրացի՛ր-բարձրացուր»:**

(Խօսք եւ երաժշտութիւն՝ Եղբ. Արիկ Գևորգեանի)



**ԴՐՕՇՆԵՐԸ ՎԵ՛Ր
ՀԱՅԿԱԿԱՆ
«ԿԱՄԱՒՈՐ ԲԱՆԱԿ»ԻՆ**



ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՏԱՂԱԲԱՐՆԵՐՈՎ ԿՐՆԵՐԿԱՅԱՑՆԵՆ ԻՐԵՆՑ ԱՊՐԱԾ ԵՐԿԻՐՆԵՐԸ

- «ԱՐԻ ՏՈՒՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ ԿՊՅՑԵԼԵՆ ԲԱՆԱԿԱՎԱՅՐ

Յ աճախ կը կարծենք, թէ բանակումի օրերը կրնան նմանիլ իրարու: Ամէն առտու օրուան ծրագիրը կը կարգանք եւ կը փնտռենք նորութիւն մը: Զորեքշաբթի, 4 Օգոստոսը Համա-Հ.Մ.Ը.Մ.ական բանակումներուն համար ընդհանրապէս նորութիւն էր եւ աննախընթաց:

Առտուան նախաճաշէն անմիջապէս ետք բոլոր պատուիրակութիւնները մրջիւնի նման կ'աշխատէին, իւրաքանչիւրը կը պատրաստէր իր տաղաւարը: Բանակումի խմբապետա-

կան կազմին կողմէ նախատեսուած օրուան ծրագիրին համաձայն, իւրաքանչիւր պատուիրակութիւն պէտք է ներկայացներ իր ապրած երկիրը՝ սովորութիւններով, պատմութեամբ, բարքերով, մշակոյթով, որուն համար ճշդուած էր մրցանակ:

Նշեալ ժամուն պատուիրակութիւնները իրենց տրամադրուած տաղաւարներուն առջեւ պատրաստ կը սպասէին դատակազմին, որպէսզի իրենց մօտէն անցնելով, քննէր իրենց «տնակ-երկիրը», ի հարկին համտեսէր հրամցուած ուտելիքը, կարգար ներկայացուած տեղեկութիւնները եւ ունկնդրէր տուեալ երկրին երաժշտութիւնը:

Նախօրոք յայտարարուած էր շրջաններուն պատրաստ ըլլալ այդ օրուան համար եւ իսկապէս, անխտիր, բոլոր խումբերն ալ խնամքով պատրաստած էին իրենց մատուցումները:

Բազմամշակութային այս նախաձեռնութիւնը առիթը ընձեռեց բոլորին, սահմաններ ու ուկիւստներ կտրելով, կարճ ժամանակամիջոցի մէջ ծանօթանալու այլ մշակոյթներու: Եռուզեռ կը տիրէր բանակավայրէն ներս, 555 հոգի շրջան կ'ընէր մէկ տաղաւարէն միւսը՝ տարբեր լեզուներ, երգեր, համեմներ, պատկերներ, որմագղներ, տարազներ...:

Հնդիկ բնիկ ժողովուրդներու՝ Ինուքշուքը Ինուկիթի հե-



Հ.Մ.Ը.Մ.-Ֆրանս



Լոնտոն



Գանատա



Չայաստան



Երուսաղեմ



Արեւելեան Մ. Նահանգներ



Արեւմտեան Մ. Նահանգներ



Իրան



Իրան



Քուեյթ



Լիբանան



Սուրիա

տախտեզական նշաններէն մինչեւ Փարիզեան Էյֆէլի աշտարակը: Պաղեստինցի գիւղացիէն մինչեւ հոյանտացի գեղուհին իրենց տարազներով: Երկիրներու պատմական, քաղաքական ու մարզական անձնաւորութիւններու ներկայացումէն մինչեւ քարտէսներ ու պատմական եւ զբօսաշրջիկական վայրերու մասին տեղեկութիւններ: Զեռայիներ, եւ վերջապէս տարբեր քիմքեր գոհացնող ուտելիքներ՝ քաղցրեղէն, թէյ, սուրճ, պտուղ ու ճաշի տեսակներ, նաեւ՝ երաժշտութիւն, նուագ ու պար, համեմը կը կազմէին բնապատկերին: Քանի մը ժամ ետք դատակազմը տուած էր իր վճիռը՝ առաջնութիւնը կը տրուէր Սուրիոյ հիւրընկալ «պետելի»ներուն, երկրորդ մրցանակը՝ Հայաստանի ճոխ ու կոկիկ տաղաւարին, իսկ երրորդութիւնը կը շահէր Լիբանան, իր խանդավառ մթնոլորտով:

Յետմիջօրէին բանակավայրը իր դռները բացաւ եւ հիւրընկալից Սփիւռքի նախարարութեան «Արի Տուն» ծրագրին մասնակիցներէն 140 հոգի:



Ջարառային Սմեթիկա



Արսեն Գրիգորեան



Լէյլա Սարիբէկեան

Հիւրերուն բարի գալուստ մաղթեց բանակումի խմբապետ եղբ. Օշին Փիրումեան, իսկ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան կողմէ եղբ. Կարպիս Գապասագալեան իր խօսքին մէջ մատնանշեց, թէ երբ կը գտնուինք հայրենի հողին վրայ, արդէն բոլորս մենք մեր տան մէջ կը զգանք ու մաղթեց, որ միասնաբար անցընենք հաճելի պահեր:

Այցերուն երև ու հիւրընկալ արի-արենոյշները հայկական երաժշտութեամբ, միախառնուած իրարու, երկար ժամեր իրենց ոտքի հարուածներուն տակ թնդացուցին բանակավայրը, իրենց սրտերը լեցնելով ուրախութեամբ: Աւելի ուշ իրենց համերգային մատուցումով երեկոյին նոր խափ տուին Լէյլա Սարիբէկեան եւ Արսեն Գրիգորեան:

Հայկական ազգային, ազգազրական, հայրենասիրական թէ քնարական երգերը խանդավառեցին բոլորը:



Սմման







Աստղալիա



Յուճաստան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓՈԽ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ ԵՒ ՍՓԻՒՌՔԻ ՆԱԽԱՐԱՐՈՒՀԻՒՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ ԲԱՆԱԿԱՎԱՅՐ

- «ԱՐԻ ՏՈՒՆ» ԾՐԱԳՐԻՆ ՍԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ ԵՐԿՐՈՐՈՂ ԱՆԳԱՄ ԸԼԼԱԼՈՎ ԲԱՆԱԿԱՎԱՅՐԻՆ ՄԷՋ

Համա-Հ.Մ.Ը.Մ.ական Ցրդ բանակումը յագեցաւ սկաուտական գիտելիքներու ծրագիրներով: Բանակումին հինգերորդ օրը յայտագիրը, Հինգշաբթի, 5 Օգոստոս ամբողջութեամբ յատկացուցաւ սկաուտական խաղերու եւ մրցումներու:

Կէսօրէ առաջ թէ ճաշէն ետք արիարենոյձներն ու երէցները կատարեցին սկաուտական խաղեր ու մրցումներ՝ օճախ վառեցին ու թէյ պատրաստեցին՝ համաձայն պահանջուած ձեւին, շինեցին մարտակառքեր, մրցեցան խառնաշըփոթ, անկանոն բանակավայրի մը համար, օգտագործեցին քարտէսագիտութիւնը, մորսի ալբուրենով կատարեցին

պատգամներու փոխանցում եւ այլ խաղեր, որոնց յաղթանակին համար դատակազմին կողմէ նկատի առնուած էր տուեալ խաղի աւարտի ժամանակն ու ճշգրիտ բովանդակութիւնը:

Խաղին արդիւնքը, բոլորին համար անխտիր՝ ուսուցողական, որովհետեւ բոլոր մասնակիցներն ալ սորվեցան կամ վերլիչեցին սկաուտական գիտելիքներ՝



Սփիւռքի նախարարուհին կ'ողջունէ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամները:



Փոխ վարչապետը եւ Սփիւռքի նախարարուհին կը ժամանեն բանակավայր:

կապ կապել, կողմնացոյց օգտագործել, չափել, վառել...:

Այս մրցումներուն աւարտին կատարուեցաւ անհրաժեշտ գնահատականը եւ մրցանակներ ստացան հետեւեալ խումբերը:-

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԵԱՆ ՄՐՑՈՒՄ

Առաջին՝ Լիբանան
Երկրորդ՝ Պուլկարիա, Շուէտ
Երրորդ՝ Արեւմտեան Մ. Նահանգներ

ՔԱՐՏԷՍԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՄՐՑՈՒՄ

Առաջին՝ Արեւմտեան Մ. Նահանգներ
Երկրորդ՝ Լիբանան
Երրորդ՝ Հայաստան

ԹԷՅ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ՄՐՑՈՒՄ

Առաջին՝ Հարաւային Ամերիկա
Երկրորդ՝ Արեւմտեան Մ. Նահանգներ
Երրորդ՝ Քուէյթ

ՄԱՐՏԱԿԱՌՔԻ ՄՐՑՈՒՄ

Առաջին՝ Լիբանան
Երկրորդ՝ Արեւմտեան Մ. Նահանգներ
Երրորդ՝ Սուրիա

ԱՆԿԱՐԳ ԲԱՆԱԿԱՎԱՅՐԻ ՄՐՑՈՒՄ

Առաջին՝ Գանատա
Երկրորդ՝ Արեւմտեան Մ. Նահանգներ
Երրորդ՝ Լիբանան



Հայաստանի փոխ վարչապետ, տարածքային կառավարման նախարար Արմէն Գեորգեան:



Եղբ. Սիիրան Շիմշիրեան Հ.Մ.Ը.Մ.ի յուշանուէրը կը յանձնէ Հայաստանի փոխ վարչապետին:

Համա-Հ.Մ.Ը.Մ.ական Գրդ բանակումին յաճախակի էին պաշտօնական անձնաւորութիւններու բանակավայր այցելութիւնները: Այդ օրուան աւարտին բանակողները ընդունեցին այցելութիւնը Հայաստանի փոխ վարչապետ, տարածքային կառավարման նախարար Արմէն Գեորգեանի, Սփիւռքի նախարարուհի Հրանոյշ Յակոբեանի, Արադածոտնի մարդպետ Սարգիս Սահակ-

եանի, նաեւ երկրորդ անգամ ըլլալով «Արի տուն» ծրագրի մասնակից պարման-պարմանուհիներուն: Պատուոյ հիւրերը գիմաւորուեցան սկաուտական գոյգ շարքերու ընդմէջէն: Բանակումի ընդհանուր խմբապետ եղբ. Օշին Փիրումեան բարի գալուստ մաղթեց հիւրերուն եւ ներկայացուց սկաուտներուն իրագործած այդ օրուան յայտագիրը: Այնուհետեւ, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անունով ելոյթ ունեցաւ եղբ. Կարպիս Գապասազայեան: Եղբայրը առաջին հերթին նշեց, թէ մուտքին յարգարժան հիւրերուն՝ փոխ վարչապետին եւ Սփիւռքի նախարարուհիին յանձնուեցաւ բանակումի փողկապը, եւ փողկապ կրելը խոստումի նշան է՝ «Մենք այսօր եկանք մեր փողկապը անցընելու Սփիւռքի մեր նախա-



Բանակումի ընդհանուր խմբապետ եղբ. Օշին Փիրումեան:



Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Կարպիս Գապասագալեան:



րարուհիին եւ փոխ վարչապետին անգամ մը եւս ըսելու մեր խոստումը, նաեւ անժամանցելի եւ անհերքելի այն իրականութիւնը, որ Սփիւռք եւ Հայրենիք մէկ մարմին են»: Եղբայրը ընդգծեց Արշակ Բ. Թագաւորի օրինակով Հայրենի հողին վրայ զօրաւոր զգալու եւ քաջաբար խօսելու իրավիճակը եւ ընդգրծեց, թէ այս բանակումին Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւնը մասնակիցներու թիւը սահմանափակեց 555ով, նկատի ունենալով բանակավայրին տարածքը ու աւելցուց, թէ պիտի ուզէր որ Հ.Մ.Ը.Մ.ին տրուէր աւելի ընդարձակ տարածք, աւելի մեծ թիւով այստեղ ըլլալու եւ Հայրենի հողին հետ ամուր շփման մէջ մտնելու համար:

Ապա, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Միհրան Շիմշիրեան փոխ վարչապետ Արմէն Գէորգեանին փոխանցեց Հ.Մ.Ը.Մ.ի յուշանուէրը:



Հիւրերը կը ծանօթանան բանակավայրի խոհանոցին:

Այնուհետեւ բեմ հրաւիրուեցաւ փոխ վարչապետ Արմէն Գէորգեան: Ան նախ ողջունեց բանակողներն ու «Արի տուն» ծրագրի մասնակիցները եւ յայտնեց, թէ «Հայաստանի Հանրապետութիւնը ի դէմս կառավարութեան պատրաստակամ է աջակցելու բոլոր այն ծրագրերին, որոնք առաջին հերթին ուղղուած կը լինեն մեր սփիւռքահայ Հայրենակիցներին, բարեկամներին,

Հայրենիքին կապելու»: Ան նշեց, թէ Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան ուշադրութեան մաս կը կազմեն այն բոլոր ծրագրերները, որոնք առնչուած են Սփիւռքի եւ սփիւռքահայութեան եւ աւելցուց, թէ՛ «այդ իմաստով, ես որպէս առաջնահերթ խնդր ընդունեցի այսօր այն հարցը, որ պէտք է զբաղուենք ձեր նոր հողատարածքի խնդիրներով»:

Փոխ վարչապետը մաղթեց որ յառաջիկային Հայրենիքի հետ հանդիպումները գառնան շարունակական եւ բովանդակալից:

Պաշտօնական այս բաժնէն ետք բեմը յանձնուեցաւ «Արի տուն» ծրագրին մաս կազմող պարի եւ երգի խումբերուն, որոնք հայկական երգերու փունջով եւ պարերով խանդավառեցին մրթնորոտը:

Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ՝ Հ.Յ.Դ. ԲԻՒՐՈՅԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԻՆ



Յամա-Հ.Մ.Ը.Մ.ական 9րդ բանակումին չորրորդ օրը, Չորեքշաբթի, 3 Օգոստոս 2010ին, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան մէկ պատուիրակութիւնը, բաղկացած՝ եղբայրներ Գրիգորիս Պողարեանէ, Կարպիս Գապասագալեանէ, Միհրան Շիմշիրեանէ, Գարլոս Սէֆերեանէ եւ Յարութիւն Յարութեանէ, այցելեց Հ.Յ.Դ Բիւրոյի Երեւանի գրասենեակ եւ հանդիպում մը ունեցաւ Բիւրոյի ներկայացուցիչ Հրանդ Մարգարեանի հետ:

Հանդիպումին ընթացքին արծարծուեցան Համա-Հ.Մ.Ը.Մ.ական բանակումի աշխատանքներն ու Հ.Մ.Ը.Մ.ի առնչուող նիւթեր: Հանդիպումին աւարտին, Կեդրոնական Վարչութիւնը բանակումին յուշանուէրը փոխանցեց Հրանդ Մարգարեանին:



ՅԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ՝
Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ՆԱԴԱՏԱԿՆԵՐՈՒ
Նոյն օրը, աւելի կանուխ, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան պատուիրակութիւնը այցելեց Եռաբլուր եւ յարգանքի իր տուրքը ընծայեց Հ.Մ.Ը.Մ.ական նահատակ եղբայրներ Վարդան Բախշեանի եւ Վիգէն Չաքարեանի յիշատակին:

● Երեկոյեան, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբայրներ Կարպիս Գապասագալեան եւ Յարութիւն Յարութեան բանակումի աշխատանքներուն մասին հարցազրոյց մը ունեցան «Երկիր Մետիա» պատկերասփիւռի կայանէն:



ԲԱՆԱԿՈՒՄ

2010

ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐ

Հ.Մ.Ը.Մ.ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ
ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
Գրիգորիս Պողարեան
Կարպիս Գապասագալեան
Միհրան Շիմշիրեան
Յարութիւն Յարութեան
Գարլոս Սէֆերեան

ԲԱՆԱԿՈՒՄԻ ԳՈՐԾԱԴԻՐ
ՄԱՐՄԻՆ
Օշին Փիրումեան
(Ընդհ. խմբապետ)

Էմիլ Տեր Գեորգեան
(Փոխ խմբապետ)
Թալին Օրտողեան
(Փոխ խմբապետուհի)
Ռոմանոս Պետրոսեան
(Ընդհ. հերթապահ)
Սեդա Պէշլեան
(Զարտուղարութիւն)
Մանուկ Զեօշկերեան
(Խոհանոցի եւ ներքին
մթերապահութեան պտսխ.)
Չարեհ Սովսեսեան
(Սկաւտական ձեռնային
աշխատանքներու եւ
մրցումներու պտսխ.)
Լիլիթ Չաքարեան
(Մամուլի եւ
չրջապտոյտներու
պատասխանատու)
Վարդան Միրումեան
(Անձնակազմերու պտսխ.)

ԱՆՁՆԱԿԱԶՄ
Վերա Տեր Պօղոսեան
(Կ. Վարչութեան
գործավար)
Յասմիկ Սարգիսեան
(Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի
գործավար)

ՍԵՒՄՆԱՅ ԼԻՃ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ



Համա-Հ.Մ.Ը.Մ-ական Ցրդ բանակումին ընթացքին, սկառուտական գիտելիքներու փոխանցման կողքին եղան մշակութային որակի պտույտներ, նաեւ՝ այցելութիւններ հաճելի վայրեր:

Ուրբաթ, 6 Օգոստոսին, բանակողները այցելեցին Գեղարքունիքի մարզին մէջ գտնուող Սեւանայ լիճ: Շրջեցան թերակղզին, այցելեցին Ս. Առաքելոց եւ Ս. Աստուածածին եկեղեցիները, լողացին Սեւանի ջրերը ջուրերուն մէջ, համտեսեցին համեղ իշխանը ու հաճելի պա-

հեր ապրեցան միասնաբար, Հայաստանի բարկ արեւուն տակ:

Սպառած՝ ամբողջ օրուան մը տաքէն ու լողէն, արի-արենոյշները վերադարձան բանակավայր, Բիւրականի մաքուր ու զով օդը վայելելու:

ՊԱՏՄԱ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵԴՐՈՆՆԵՐ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ

Բանակումին վերջնութեւր օրուան ծրագիրը յատկացուեցաւ շրջապտույտներու:

Պատուիրակութիւնները բաժնուեցան չորս խումբի, համաձայն իրենց նախասիրութեան, այցելելու Հայաստանի պատմա-մշակութային կեդրոնները՝ Հաղբատ-Սանահին, Խոր Վիրապ-Նորավանք, Գառնի-Գեղարդ, Օշական-Մուղնի-Սաղմոսավանք:

Եթէ մէկ խումբին համար Խոր Վիրապն ու Արարատի դիմաց ուխտի վերանորոգումը պայմանական էր, միւսներուն համար հեթանոսական տաճար այցելութիւնը արմատներու հետ շփում էր, իսկ Ս. Մեսրոպ Մաշտոցի գերեզման





այցը ունէր իմացական մօտեցումի բնույթ: Գոյատեւելու միջոցները միատեսակ չեն...

Յոգնութեան երբ կը միաձուլուի հաճելին, նաեւ շփումը պատմութեան՝ պահը կը դառնայ հիանալի:





ԲԱՆԱԿՈՒՄԻՆ ՓԱԿՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆԸ - «ՑՏԵՍՈՒԹԻՒՆ ՄԸՆ Է ԵՂԲԱՅՐ, ՄԻԱՅՆ ՑՏԵՍՈՒԹԻՒՆ...»

Կիրակի, 8 Օգոստոս 2010: Համա-Հ.Մ.Ը.Մ.ական 9րդ բանակումին վերջին օրն է: Բանակավայրէն ներս տիրող վիճակը կրկին անգամ տարբեր է:

Առաւօտեան սկսուող արարողութեանէն ետք, պատուիրակութիւնները անհամբեր վիճակի մէջ կը գլուխը շարժեն: Պիտի փոխանակեն իրենց յուշանուէրները, յանձնեն եւ ստանան ո՛չ թէ նիւթական փայտիկներն ու անոնց վրայի պատկերները, այլ՝ անոնց ետին 10 օրուան ապրուած կեանքը յիշատակի ու յուշի վերածող խորհրդանիշը: Անոնց վրայ արձանագրուած են տարեթիւեր,

շրջաններու անուններ, պատկերներ... Պաշտօնական փոխանակումներուն յաջորդեց «անպաշտօն» բաժինը: Բանակումին ընթացքին իրարու ծանօթացած, միասին խնդացած ու պտրտած, խօսած

ու երգած, յոգնած ու յաղթած քոյր ու եղբայրներ իրարու յանձնեցին իրենց սեփական զազակները, պայուսակները, գլխարկներն ու այլ իրեր, որոնք յազեցած էին Հ.Մ.Ը.Մ.ով:

Համախմբումէն մարմին կը զգենու ազնիւ նպատակի նկատմամբ հաւատքը:


Ու ատոր հաւատալու համար պէտք է ականատես ըլլալ բանակող պարման-պարմանուհիներու, երիտասարդ-երիտասարդուհիներու խանդավառութեան ու խանդին, զուարճութեան ու միասին «ապրելու» անհատնում ճիգին...

Սակայն բանակումը ա-





Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամ եղբ. Կարապիտ Գապասագալեան:



Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի վարչութեան ատենապետ եղբ. Հրաչ Շմաւոնեան:



Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան ատենապետ եղբ. Գրիգորիս Պողարեան:



Հայաստանի Ազգային Ժողովի պատգամաւոր, Հ.Յ.Դ. Գերագոյն Մարմնի անդամ Արտաշէս Շահպազեան:

ւարտած չէր, փոքր դաղարէ մը ետք սկստուտները անցան բանակումի ծրագրին վերջին բաժնին գործադրութեան՝ զարգացման մրցումին, պատուիրակութիւններու միջեւ:

Նախապէս շրջաններու փոխանցուած էին հարցաթերթիկներ՝ պատմութեան, աշխարհագրութեան, գրականութեան, մարզանքի եւ սկստուտական նիւթեր պարփակող հարցումներով: Շրջանները պէտք է պատրաստուած ներկայանային բանակավայր: Իւրաքանչիւր խմբակ, բաղկացած եօթը հոգիէ, պիտի մրցէր իրարու դէմ: Լարուած խաղին արդիւնքը, դատակազմի քննութեանէն ետք կը պարզէր հետեւեալ պատկերը: Յաղթող կը հանդիսանար առաջին՝ Երուսաղէմ, երկրորդ՝ Արեւելեան Միացեալ Նահանգներ, իսկ երրորդ դիրքը կը գրաւէր Լիբանանի պատուիրակութիւնը:

Յետմիջօրէին, համա-Հ.Մ.-

Ը.Մ.ական Յրդ բանակումի փակման հանդիսութեան ներկայ գտնուեցան պաշտօնական անձնակազմութիւններ, Հ.Յ.Դ. Գերագոյն Մարմնի անդամ եւ Ազգային Ժողովի պատգամաւոր Արտաշէս Շահպազեան, Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան անդամներ, համակիրներ եւ բարեկամներ:

Բարի գալուստի խօսքը ուղղեց բանակումի ընդհանուր հերթապահ եղբ. Ռոմանոս Պետրոսեան: Այնուհետեւ իր

սրտի խօսքը ուղղեց Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի վարչութեան ատենապետ եղբ. Հրաչ Շմաւոնեան, որ մատնանչեց բանակողներուն հայրենիքը իբրեւ սեփական տուն ընդունելու հանգամանքը եւ կոչ ուղղեց կրկին վերադառնալու այնտեղ:

Ապա, փոխանցուեցան Կեդրոնական Վարչութեան կազմակերպած «Արարատեան» կարգին մասնակցած 10 քոյր-եղբայրներուն վկայականները:

Բանակումի ընդհանուր խմբապետ եղբ. Օշին Փիրումեան փոխանցեց իր սրտի խօսքը: Եղբայրը հաստատեց, թէ բանակումի մասնակիցները միասնական աշխատանքով յաջողեցան բանակումը հասցնել լաւագոյն ձեւով իր սպասելի լրումին: Եղբ. Փիրումեան իր երախտիքի խօսքերը ուղղեց բանակումի պատուիրակութիւններու պատասխանատուներուն, ինչպէս նաեւ խմբապետա-



Յուշանուէրների բանակումի գործադիր մարմնի անդամներուն:



«Ո՞վ կրնայ առագաստանալ մը վարել առանց հովի Ու իր ընկերոջմէ բաժնուիլ առանց արցունքի...»

կան կազմին, որոնց նուիրուածութեան ու գործօն մասնակցութեան շնորհիւ բանակումը ունեցաւ իր դրական ընթացքը: Եղբարփակելով իր խօսքը, եղբայրը նշեց, թէ «Համա-Հ.Մ.Ը.Մ.ական բանակումն առիթ հանդիսացաւ, որ դուք Հայրենիք վերադառնաք: Անկեղծօրէն յոյս եմ փայփայում, որ այս ըն-

թացքում ձեր սէրն հայրենի հողի հանդէպ աւելի ուժգին է դարձել, եւ որ անհամբերութեամբ պէտք է սպասէք յաջորդ հանդիպմանը, ուրեմն՝ միայն ցտեսութիւն...»:

Ապա խօսքը տրուեցաւ Ազգային Ժողովի պատգամաւոր, Հ.Յ.Դ. Գերագոյն Մարմնի անդամ Արտաշէս Շահապետ-

նին: Ան մատնանշեց, թէ այս բանակումը իւրատեսակ կամուրջ է Հայրենիքի եւ Սփիւռքի միջեւ, եւ մեծ յոյսեր կապուած են Հ.Մ.Ը.Մ.ականներուն՝ գաղթօճախներուն մէջ հայեցի դաստիարակութիւն փոխանցելու առումով: Ան թելադրեց, որ ազգային գիտակցութիւնն ու ինքնութիւնը ամուր մնայ իրենց մէջ եւ պատուով կրեն հայ երիտասարդին պատասխանատուութիւնն ու նպատակները:

Վերջին խօսքը առնողը եղաւ Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան կողմէ ատենապետ եղբ. Գրիգորիս Պողարեան: Եղբայրը ըսաւ, թէ այս բանակումը առաւել կենսունակութիւն բերաւ միութեան, վերանորոգեց Հ.Մ.Ը.Մ.ականի ուխտը, վերահաստատեց Հայրենիքի հանդէպ սէրն ու հաւատարմութիւնը եւ վերաբեկորեց սկստուին դերը:

Եղբայրը թելադրեց, որ «Արարատեան» կարգի վկայականը խթան հանդիսանայ շատերուն շարունակելու ըսկառուական ծառայութիւնը Հ.Մ.Ը.Մ.ի շարքերէն ներս եւ տիրանալու այդ կարգին, «Կարգ՝ որ ցուցանիչ չէ փառքի, այլ պարզապէս հաստատական, թէ ենթական իր «աղքատի լուծման» զետեղած է ազգապահպանումի եւ ազգակերտման գանձանակին մէջ»:



Աւարտին տեղի ունեցաւ բանակումին փակման դրօշակի արարողութիւնը, «Յառաջ նահատակ» քայլերգի երգեցողութեամբ: Բանակումին դրօշակը, Հ.Մ.Ը.Մ-ի Կեդրոնական վարչութեան կողմէ եղբ. Կարպիս Գապասագալեան, իբրեւ յիշատակ յանձնեց բանակումի խմբապետ եղբ. Օշին Փիրումեանին, զոր մեծ յուզումով տէր կանգնեցաւ իրեն տրուած պատիւին:

Այնուհետեւ փոխանցուեցան յուշանուէրներ՝ պատուիրակութեան խմբապետներուն եւ գործադիր մարմնի քոյր-եղբայրներուն:

Բանակումին եզրափակիչ խօսքը պէտք է ըսել... ու այդ՝ ժողովրդավարութեան սիրոյն, բազմակարծիք:

Ուրեմն՝ կարելի՞ է համադրել, քննադատութիւնները համախմբել, անոր փորձառութենէն թելադրուած՝ բարեյալուած ձեւով ներկայանալու համար հետագային: Անշուշտ, եւ շինիչը այդ կէտն է: Ինքնաքննադատութիւն կարենալ կատարելը:

Ամբողջութեամբ կողմնակից ըլլալով քննադատական ոգիին, ընդունելով, որ ան շինիչ է ու նորոգող իր բերելիք նպաստով, սակայն այս բանակումին եզրափակիչ խօսքերը այլ լարի վրայ կը գտնուէին: Պատճառը՝ արդեօ՞ք կատարեալ գոհունակութիւնն էր, թէ տարիներու ընթացքին ինքնաքննադատութեան արդիւնք եղած սրբագրութիւնները: Յամենայնդէպս, ինչ որ ալ եղած ըլլայ բուն պատճառը, ընդհանուր տպաւորութիւնը, տիրող մօտեցումը զրական էր բոլորին մօտ: Իսկ ինչո՞ւ անպայման փնտռել յոռին, երբ եղբայրական ու Հ.Մ.Ը.Մ-ական ներողամտութեամբ ու հանդուրժողականութեամբ մանրուքները անտեսուած էին եւ գնահատուած էին որակն ու ժրաջան ներդրումը:



Կարենալ համադրելու համար բանակումի մը ընդհանուր պատկերը, անհրաժեշտ էր դիմել զայն իրագործող

տարեալ գոհունակութիւնն էր, թէ տարիներու ընթացքին ինքնաքննադատութեան արդիւնք եղած սրբագրութիւնները: Յամենայնդէպս, ինչ որ ալ եղած ըլլայ բուն պատճառը, ընդհանուր տպաւորութիւնը, տիրող մօտեցումը զրական էր բոլորին մօտ: Իսկ ինչո՞ւ անպայման փնտռել յոռին, երբ եղբայրական ու Հ.Մ.Ը.Մ-ական ներողամտութեամբ ու հանդուրժողականութեամբ մանրուքները անտեսուած էին եւ գնահատուած էին որակն ու ժրաջան ներդրումը:

Կարենալ համադրելու համար բանակումի մը ընդհանուր պատկերը, անհրաժեշտ էր դիմել զայն իրագործող



«Արդեօք պէտք է որ բաժնուիք Մեկնիք անվերադարձ...»



ներուն, անոր համար ճգնողներուն, զիրենք բաւարարած կամ անբաւարար թողած անձերուն:



Նման ծաղկաբաղի մը արդիւնքը պարզեց հետեւեալ պատկերը:

Մէկ բառով կարենալ բնորոշելու համար համա-Հ.Մ.Ը.Մ.ական Յրդ բանակումը, պատուիրակութիւններու խմբապետներէն մէկուն համար բանակումը միութիւն էր, ուրիշի մը համար ծառայած էր իբրեւ դաստիարակիչ դեր ունեցող իրադրութիւն, երրորդին համար հանդուրժողականութեան օրինակ մըն էր, միւսին ակնոցով միասնակա-

Յուշանուէրներ «Սարգիկ»ի ներկայացուցիչ քոյր Սեւան Նազարեանին, Յ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութեան գործավար քոյր Կերա Տէր Պօղոսեանին եւ Յ.Մ.Ը.Մ.-Յ.Ա.Ս.Կ.ի գործավար քոյր Յասմիկ Սարգիսեանին:

նութեան, ու յաջորդաբար՝ հետաքրքրական, զարգացում փոխանցող, կազմակերպուած, գոհացուցիչ, հաճելի, ուրախ մթնոլորտ ստեղծող, Հ.Մ.Ը.Մ.ի ոգին բովանդակող, միացեալ աշխատանքի ծառայող, դպրոց, անմոռանալի, հիանալի ու հայաճանաչման նպաստող շարժառիթ:

Բանակումին արդիւնքը գնահատելու համար ընթերցողը չափազանցուած կրնայ գտնել նշուած ածականները, սակայն բանակողները երբեք այդ մտահոգութենէն թերադրուած չէր, որ տուին իրենց կարծիքը:

Իսկ մեկնողներուն արցունքնե՞րը... Ուրեմն, փակելով համա-Հ.Մ.Ը.Մ.ական Յրդ բանակումին խարոյկը՝ «Ցտեսութիւն մըն է եղբայր, միայն ցտեսութիւն...»:







Համա-Հ.Մ.Ը.Մ.-ական
9-րդ Բանակում
ԲԱՅԱՍՏԱՆ 2010
Արևելեան Մ.Ն. Երջանի
Պատուիրակություն

«ԱՐԻ ՏՈՒՆ» ԾՐԱԳՐԻ
ՊԱՐԱԽՈՒՄԲԸ Հ.Մ.Ը.Մ.Ի
ՀԻՒՐԸՆԿԱԼՈՒԹԵԱՄԲ

ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱ «ԳՈՐԾԵՆՔ»



Ն 9-ՐԴ ԲԱՆԱԿՈՒՄ «ՄԻԱՄԻՆ»



ԲԱՆԱԿՈՒՄԻՆ ՅԻՇԱՏԱԿԵԼԻ ՊԱՀԵՐԸ՝ ԽԱՐՈՒԿԱՀԱՆՌԷՄՆԵՐԸ



Բանակումներու ամենէն հաճելի պահերէն մէկն է խարուկահանդէսը, ուր սկառտներ կրակին շուրջ կ'երգեն ու կը պարեն, կանչեր կը կատարեն, կատակներ կը ներկայացնեն, այլ խօսքով՝ կը գրլարձանան:

Համա-Հ.Մ.Ը.Մ.ական Թրգ բանակումի յայտագիրին մէջ նախատեսուած

խարուկահանդէսները, մէջընդմէջ, բաժնուած էին երկու օրուան տարբերութեամբ: Բացի Լիբանանի պատուիրակութենէն, միւս շրջանները համախումբ ներկայացուցին նախօրոք իրենց պատրաստած խարուկահանդէսները:

Առաջին խարոյկը ներկայացնելու առիթը տրուած էր Լիբանանի պատուիրակութեան:

Մէկ ժամուան ընթացքին, Լիբանա-

նէն ժամանած քոյր ու եղբայրները ներկայացուցին իրենց ապրած երկրի մշակութային արուեստէն պատառիկներ՝ պար, երգ, բայց մանաւանդ՝ հայկական եւ սկառտական նիւթերով հատուածներ հայ ժողովուրդի անմահ գաւակներուն ձօնուած պատուոյ յիշեցումներ, ազգային ոգին բարձրացնող նշանախօսքեր, որոնք մեծ խանդավառութիւն ստեղծեցին բանակողներուն մօտ:





Սկսած տական խաղերն ու բանակումի կեանքին առնչուող կատակները սերտացման, գիրար ճանչնալու հաճելի առիթներ ստեղծեցին, բայց մանաւանդ օգնեցին խմբային մթնոլորտի պահպանման:

Երկրորդ խարոյկով հանդէս եկան չորս պատուիրակութիւններ՝ Արեւմտեան Միացեալ Նահանգներ, Շուէտ, Քուէյթ եւ Հայաստան, որոնք ներկայացուցին իրենց պատրաստած յայտագիրները՝ պարեր, խաղեր, կանչեր ու երգեր: Խարուկահանդէսներու շարքին երրորդը ներկայացուեցաւ Աւստրալիոյ, Գանատայի, Սուրիոյ եւ Ալմերիոյ պատուիրակութիւններուն կողմէ:

Չորրորդ խարուկահանդէսը կը հա-

մախմբէր Արեւելեան Միացեալ Նահանգներու, Լոնտոնի, Պուլկարիոյ եւ Ամմանի պատուիրակութիւններու աշխատանքները: Իսկ համա-Հ.Մ.Ը.Մ.ական Թրդ բանակումի վերջին խարոյկը վարեցին Իրանի Ֆրանսայի եւ Հարաւային Ամերիկայի պատուիրակութիւնները:



«ԱՐԱՐԱՏԻ ԼՄՆՁԵՐԻՆ ԲԱՆԱԿՈՒՄ ԸՆԵԼ Կ՛ՈՒԶԵՆՔ...»

(Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱԴՊԻՐ ԵՂԲ. ԿԱՐՊԻՍ ԳԱՊԱՍԱԳԱԼԵԱՆԻ ԽՕՍԲԸ, ԱՐՏԱՍԱՆՈՒԱԾ՝ ԲԱՆԱԿՈՒՄԻ ԲԱՑՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ)

Համա-Հ.Մ.Ը.Մ.Վ-ական Յրդ բանակումը շարքին հինգերորդն է, որ կ'իրագործուի մայրենի հողին վրայ, որպէս մնայուն ժամադրաւայր աշխարհացրիւ Հ.Մ.Ը.Մ.Վ-ական սկաուտներուն:

Համա-Հ.Մ.Ը.Մ.Վ-ական բանակումները պատահական բանակումներ չեն եղած, ոչ ալ անոնց վայրերու ընտրութիւնը պատեհութեան ձգուած է, այլ անոնք ունին իրենց նպատակը եւ հիմնաւորուած հեռանկարները:

Չորս տարին անգամ մը Հ.Մ.Ը.Մ.Ի ըսկաուտները իրենց գաղթօճախներէն դուրս ժամադրուած են նոյն վայրին մէջ միատեղ գտնուելու, միասնաբար բանակելու, միասնաբար վայելելու եւ մանաւանդ միասնաբար գործելու:

Միասնաբար գործելու համար անհրաժեշտ են փոխադարձ հասկացողութիւն, անկեղծութիւն, վստահութիւն, ծառայութիւն, պարտաճանաչութիւն եւ կարգապահութիւն: Վերոյիշեալ ազդակները անվիճելի գրաւականներ են հաւաքական կեանքի յառաջդիմութեան եւ յաջողութեան համար, որուն համար մեզմէ իւրաքանչիւրը պարտաւոր է իր գործօն մասնակցութիւնը բերել ընդհանուր բանակումի բոլոր աշխատանքներուն, որոնց արդիւնքը բոլորիս է: «Բառերը ծաղիկներ են, որոնք շուտ կը թօշնին, իսկ գործը պտուղ է, որ կը վայելենք»:

Եկէք, հետեւաբար, գիտակցորէն եւ համոզումով գործենք միասնաբար, միասնաբար վայելելու այս ընդհանուր բանակումին յաջողութիւնները, որովհետեւ կատարելութիւնն է բարձրա-



գոյն իտէայլ կեանքին, իսկ յառաջդիմութիւնն է օրէնքը:

Հ.Մ.Ը.Մ.Ի սկաուտը, հաւատարիմ իր խոստումին, երբ նախորդ բանակումներու աւարտին հրաժեշտ կու տար՝ ըսելով՝ «յաջորդին կրկին Հայաստան կը տեսնուինք», ահաւասիկ նոյն թելադրութեամբ, տասնեակ հազարաւոր մղոններ կտրելով, եկած էք ձեր նախորդներուն նման, Հ.Մ.Ը.Մ.Ի սկաուտին ուխտը վերանորոգելու, տէր կանգնելու մեր ազգային անհրաժեշտ պահանջատիրութեան, որպէս մէկ եւ անբաժանելի ժողովուրդ հայոց:

Այսօր ամէնքով կանգնած ենք Արագածի փէշերուն եւ մեր հայեացքները սեւեռելով դէպի սրբազան Արարատ լեռ, կու գանք հաւաքաբար անգամ մը եւս վերանորոգ կամքով վերահաստատելու մեր անժամանցելի խոստումը՝ «Արարատի լանջերին բանակում ընել կ'ուզենք...»:

Հ.Մ.Ը.Մ.Ի սկաուտը քաջ գիտէ, թէ համոզումը կամքին գորացուցիչ դեղն է. համոզում եւ կամք միացած՝ ժայռեր կը փշրեն ու լեռներ կը հարթեն:

Ահա այս ըմբռնումներով միասնաբար պիտի ընթանանք յառաջ, գիտակից մեր գոյգ նշանաբաններուն՝ «Միշտ պատրաստ»ին եւ վեհաշող «Բարձրացի՛ր-բարձրացու՛ր»ին:

Հ.Մ.Ը.Մ.Ի Կեդրոնական Վարչութեան անունով բացուած կը յայտարարեմ համա-Հ.Մ.Ը.Մ.Վ-ական Յրդ բանակումը:



ՄԷԿ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆՊԱՏԱԿ

(Հ.Յ.Դ. ԲԻՒՐՈՅԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ՀՐԱՆԴ ՄԱՐԳԱՐԵԱՆԻ ԽՕՍԲԸ, ԱՐՏԱՍԱՆՈՒԱԾ՝ ԲԱՆԱԿՈՒՄԻ ԲԱՑՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ)

Սիրելի Հ.Մ.Ը.Մ.ականներ,
Շատ գեղեցիկ նշանախօսք էք ընտրած ձեր բանակումին համար՝ «Գործենք միասնաբար»:


Քանի մը շեշտադրում եմ ուզում անել, որ աւելի կ'իմաստաւորի այդ նշանախօսքը, որ իր մէջ արդէն ամփոփում է այն իմաստը, որ ես պէտք է ասեմ:

Մենք իբրեւ ազգ, իբրեւ ժողովուրդ, իբրեւ աշխարհասփիւռ ազգ եւ ժողովուրդ պէտք է գործենք միասին եւ կարող ենք գործել միասին, եթէ հետապնդում ենք միասնական նպատակ: Մէկ ընդհանուր նպատակ: Այդ ընդհանուր նպատակի շուրջ է որ կարելի է գործել միասին:

Հ.Մ.Ը.Մ.ը հայկական մեր իրականութեան մէջ համահայկական ամենամեծ կառույցն է, եւ Հ.Մ.Ը.Մ.ը այս առումով մեծ անեկիք ունի եւ այն ինչ որ կարող է լինել մեր բոլորիս, ամբողջ հայ ժողովրդի, բոլոր հատուածների, բոլոր խմբակցութիւնների, բոլոր կազմակերպութիւնների միասնական նպատակը պէտք է լինի հայկական պետականութեան միջոցով իրականացնել նրա վերջին երազանքները,



իր, իրականացնել մեր ազգային նպատակները, ջանք ձիգ թափել ազգային միասնականութեանը, ամէն ինչ հիմնուած մեր ազգային պետականութեան վրայ եւ միայն այսպէս է որ մենք կարող ենք գործել միասին, եթէ հետապնդում ենք այս նպատակը: Համահայկական կազմակերպութեան համար մասնաւորաբար, բայց նաեւ ընդհանրապէս ամբողջ հայ ժողովրդի համար միացնող շաղախը կարող է լինել երկու բան՝ Հայ Դատը եւ Հայկական Պետականութիւնը: Սա այն սրբութիւններն են, որ ուղղակի կամ անուղղակի, գիտակցաբար կամ անգիտակցաբար, պէտք չէ շեղուել այդ հիմնական նպատակից, պէտք է լինել միշտ նպատակասլաց, որ մենք ունենք երկու հիմնական թիրախ՝ Հայ Դատ եւ Հայաստան, Հայաստանի Հանրապետութիւն եւ Հայկական Պետականութիւն: Այս երկուսով է, որ պէտք է մենք կարողանանք վերածուել ազգի եւ այդ ազգը տանենք բարձունքների: Բարձրացէ՛ք եւ բարձրացուցէ՛ք մեր ազգը: Շնորհակալութիւն:



ՆՈՐ ՈՒԺ, ՆՈՐ ԼԻՑՔ

(ՍՓԻՒՌԻ ՆԱԽԱՐԱՐՈՒՀԻ ՀՐԱՆՈՅՇ ՅԱԿՈՒԲԱՆԻ ԽՕՍԲԸ, ԱՐՏԱՍԱՆՈՒԱԾ՝ ԲԱՆԱԿՈՒՄԻ ԲԱՑՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ)

Պետական եւ քաղաքական յարգարժան այրեր,
Սիրելի երիտասարդներ,
Հայ ոգու եւ արեան ժառանգորդներ:

Ես՝ Հայաստանի Հանրապետության ըՄ֊
փիւռքի նախարարութեան անունից սիրով,
Չերմութեամբ ողջունում եմ ձեզ, շնորհաւո-
րում եմ ձեզ, որ դուք եկել էք ձեր տուն, եկել
էք մայր Հայրենիք եւ այստեղ ձեզ բերել է
Հայկ Նահապետի հայրենասիրական ոգին եւ
Նաւասարդեան յաղթանակած ոգին: Բարով
էք եկել: Ես ուզում եմ առանձնակի շնորհա-
կալուծիւն յայտնել Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական,
Շրջանային բոլոր վարչութիւններին, ձեր
ծնողներին, բոլոր կառույցներին, որ հնարա-
ւոր են դարձնում մայր Հայրենիքում այս բա-
նակումի կազմակերպումը: Ես կը խնդրեմ, որ իմ շնորհակա-
լուծիւնները տանէք եւ հաղորդէք բոլոր նրանց, ովքեր այս
պահին այստեղ չեն:

Ես հաւատացած եմ, որ դուք այս օրերին, հայկական հո-
ղից, ջրից, արեւից առնելու էք նոր ուժ, նոր լիցք, նոր կրակ եւ
հայկական կրակը ձեր հոգիներում, ձեր սրտերում տանելու
էք հայկական համայնքներ, հայկական օճախներ, աւելի բոր-



բոքելու հայկականութիւնը եւ հաւատացած եմ որ դուք միշտ
հայ էք մնալու, շարունակելու էք կապուած լինել ձեր հայրե-
նիքին, ձեր երկրին եւ այստեղ բանակումի ընթացքում դուք
կօփելու էք, մարզելու էք ձեր ոգին, ձեր մարմինը եւ կար-
ծում եմ որ առողջ հոգում, առողջ մարմին ունենալով դուք
պէտք է շարունակէք լաւ սովորել, շատ սովորել, խելացի լի-
նել եւ այս մրցակցային կեանքում միշտ յաղթող լինել: Միշտ
կարողանաք առաջ գնալ, առաջ գնալ մասնա-
գիտական առումով, առաջ գնալ այն երկրնե-
րի քաղաքական ու պետական սանդուխնե-
րով, որտեղ դուք ապրում էք եւ ես հաւատա-
ցած եմ, որ այն նշանաբանը որ դուք ընտրել
էք՝ «Գործենք միասնաբար», ինձ ակամայ յի-
շեցրեց Ներսէս Շնորհալու հետեւեալ խօսքե-
րը, որ նա ասում է. գլխաւորում՝ ազատու-
թիւն, երկրորդում՝ սէր, ամէն ինչում: Հետե-
ւաբար, միասնաբար եւ սիրով ամբողջ հայ
ժողովուրդը, Սփիւռք թէ Հայրենիք, պէտք է
իրօք մասնակցի իր հայրենի պետութեան, պե-
տականութեան կառուցմանը, կերտմանը,
զարգացմանը, մեր նոր հայրենիքի հզօրաց-
մանը: Հզօր հայրենիք, լոյսի եւ յոյսի հայրե-
նիք ունենալու ցանկութեամբ եւ ակնկալի-
քով: Բարի երթ ձեզ:

Շնորհակալութիւն:



ԲՈՒՈՐՍ ՄԻՋՄԻՆ

(ԸՆԴՀԱՆՈՒՐ ԽՄԲԱՊԵՏ ԵՂԲ. ՕՇԻՆ ՓԻՐՈՒՄԵԱՆԻ ԽՕՍՔԸ, ԱՐՏԱՍԱՆՈՒԱԾ՝ ԲԱՆԱԿՈՒՄԻ ԲԱՑՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ)

Վերջապէս, ամիսների նախապատրաստական աշխատանքներն ավարտուել են եւ եկել է օրը, որ հպարտութեամբ ու մեծ խանդավառութեամբ պիտի մկտենք գործի պիտի վերածենք մեր բոլոր ծրագրերն ու միասին քալենք առաջ՝ դէպի նպատակ:

Ողջունում եմ բոլորը: Ողջունում եմ 18 երկրներից այստեղ հաւաքուած 555 արի-արենոյշներին մէկ առ մէկ, ու մաղթում, որ յառաջիկայ 10 օրերը լինեն ե՛ւ ուսուցողական, ե՛ւ հաճելի: Հաւատացած եմ, որ այս օրերի ընթացքում կ'ամրակայուի ձեր մէջ ձեր ինքնութեան մէկ մասնիկը կազմող հայը, ազգայինը:

Հաւատացած եմ, որ երբ հրաժեշտի օրը գայ, ձեր եկած երկրների, ձեր պատկանելիութեան այսպէս ասած «գծիկաւոր» հայ ինքնութիւնը՝ ամերիկահայ, իրանահայ, իրանանահայ եւ 18 երկրի հայը կը միաձուլուի ու կը շեշտուի միայն ՀԱՅ-ը, ձեր ինքնութեան այն կարեւոր մասնիկը, որ ձեր մէջ պիտի ստեղծի անքակատելի կապ:

Հէնց սա է Հ.Մ.Ը.Մ.ի նպատակը:

Սիրելի սկաուտներ,

Ձեր առջեւ ամրացուած պատասառի վրայ է խտացուած այս բանակումի բնաբանը՝ «Գործենք միասնաբար»: Երկու պարզ



բառեր, որոնք սակայն կրում են շատ խոր իմաստ: Գալիք 10 օրերի ընթացքում ԴԱ պիտի լինի մեր նպատակը, մեր գործելակերպը: Բոլորս միասին՝ ամենապարզ շարքայինից մինչեւ ամենաբարձր ղեկավարութիւնը, ձեռք-ձեռքի տուած պիտի գործենք՝ մեր ուժերը, մեր եռանդը, մեր կարողութիւնները իրար միացրած ու պիտի քալենք առաջ՝ հայ սկաուտին վայել կեցուածքով ու հայ սկաուտի դաւանանքով:

Ուրեմն բարի երթ՝ դէպի աշխատանք:



ԶՕՐԱՑՄԱՆ ՆՈՐ ԱԶԴԱԿ

(Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.Ի ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ԱՏԵՆԱՊԵՏ ԵՂԲ. ՀՐԱԶ ՇՄԱԻՈՆԵԱՆԻ ԽՕՍԲԸ, ԱՐՏԱՍԱՆՈՒԱԾ՝ ԲԱՆԱԿՈՒՄԻ ԲԱՑՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ)

Ցարգարթան պետական այրեր,
Հ.Մ.Ը.Մ.-ի Կեդրոնական Վարչութեան
պատուարժան անդամներ,
Բանակումի կազմակերպիչներ եւ մասնա-
կիցներ,
Սիրելի հայրենակիցներ,

Հայաստանի Ազգային Սկաուտական Կազ-
մակերպութեան անունից թոյլ տուէք շնոր-
հաւորել համա-Հ.Մ.Ը.Մ.ական Ցրդ եւ Հայաս-
տանում արդէն ճրգ բանակումի կազմա-
կերպման եւ անցկացման կապակցութեամբ:

Աւելորդ է եւս մէկ անգամ նշել, որ այս
բանակումը յիրաւի, ազգանպաստ եւ կարե-
ւոր իրողութիւն է Հ.Մ.Ը.Մ.-ի պատմութեան
ընթացքում:

Հ.Մ.Ը.Մ.-ը սերունդներին է փոխանցում
գորեղ ու առողջ հայ լինելու երջանկութիւնը:
Սիրելի Հ.Մ.Ը.Մ.ականներ, ես հաւատում եմ,
որ այս տասը օրերի ընթացքում դուք ձեռք կը բերէք նոր ըն-
կերներ, բարեկամներ, առաւել կը սիրէք իր պետականու-
թիւնը վերականգնած մեր ազատ ու անկախ Հայաստանը:

Համոզուած եմ, որ այս բանակումը կը դառնայ գորաց-
ման նոր ազդակ եւ հերթական անգամ կը նպաստի Հայաս-
տան-Սփիւռք կապերի սերտացմանն ու ամրապնդմանը, որի
իրական ականատեսն ենք մենք բոլորս:



Վստահ եմ, որ հայերի հողի հզօրութեան կենսաւիշը ձեր
երակներում, մեր հնօրեայ եւ նորօրեայ հերոսների ուժը ձեր
հոգում ու բազուկներում, օտար ափերում կը շարունակի հո-
սել՝ Ձեզ հաղորդելով ազգային արժանապատուութիւն եւ
հզօրութիւն:

Ուրեմն, եկէք գործենք միասնաբար, որպէսզի կարողա-
նանք իրականացնել մեր հետապնդած նպատակները եւ
մշտապէս կարողանանք բարձրանալ եւ բարձրացնել:



ՄԻԱՄՆԱԿԱՆ, ԱԶԱՏ ՈՒ ԱՆԿԱԽ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԸ ՀԱՄԱՐ

(ԲԻԻՐԱԿԱՆԻ ՀՈԳԵԻՈՐ ՀՈՎԻԻ ՏԷՐ ՄԱՄԲՐԷՖ ԲԱՀԱՆԱՅԻՆ ԽՕՍԲԸ,
ԱՐՏԱՍԱՆՈՒԱԾ՝ ԲԱՆԱԿՈՒՄԻ ԲԱՑՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ)

Մինչ Տէրունական Աղօթքի եւ օրհնութեան խօսքը, ես այ միանում եմ բոլոր շնորհաւորանքներին եւ փոխանցում եմ Արագածոտնի Թեմի բարեխնամ Առաջնորդ Գերաշնորհ Տ. Մկրտիչ Եպս. Մկրտչեանի խօսքը, որը ցանկանում էր ուղղել այստեղ ձեզ, յարգելի մասնակիցներ:

Այսօր հաւաքուել էք այստեղ, եւս մի անգամ ցոյց տալու հայ հոգու, հայ կերտուածքի կարեւորութիւնը:

Ասուած խօսքերում յատկանշական էր մեծազնիւ տիկին նախարարի խօսքը, որտեղ մէջբերուած էր Ներսէս Շնորհալու այն խօսքերը, որ միութիւն, ազատութիւն եւ սէր էր մաղթում բոլորիս: Իրականում ձեր կարգախօսք, թէ՛ «Գործենք միասնաբար», ցանկանում ենք, որ պարտւրուած լինի այդ միասնութեան, սիրոյ եւ

ազատութեան գաղափարներով: Բազմաթիւ դարեր շարունակ մեր ժողովուրդը երազել է ազատ, անկախ, միասնական պետութեան մասին: Աստուծուն փառք որ այսօր, ձեր հետ միասին, ազատ, անկախ Հայաստանի հողի վրայ ենք, բայց նաեւ պիտի գործենք, պիտի պայքարենք, որ միասնական ու

ազատ, անկախ Հայաստան մը ունենանք: Ուստի, կը ցանկանամ, որ մենք Բարձրեալից խնդրենք մեծագոյն խմաստութիւն բոլորիս համար, խնդրենք, որ Տէրը զօրացնի մեզ հաւատքով, մեր մէջ հասունացնի այն յոյսը, որ թերեւս բանակում պիտի լինի նաեւ Արարատի լանջին, ինչպէս ասուեց:

Ուստի, միասնական, բոլորս միասին աղօթենք առ Աստուած: Ամէն:



ՀԱՅՐԵՆԵԱՑ ՀՈՂԻ ՎՐԱՅ ԳՏՆՈՒԵԼՈՒ ՏԱՄՆՕՐԵԱՅ ԲԵՐԿՐԱՆՔԸ

(ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԵՐԹԱՊԱՀ ԵՂԲ. ՌՈՍԱՆՈՍ ՊԵՏՐՈՍԵԱՆԻ ԽՕՍԲԸ,
ԱՐՏԱՍԱՆՈՒԱԾ՝ ԲԱՆԱԿՈՒՄԻ ԲԱՑՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ)

Մեծարգոյ տիկին նախարար,
Յարգելի Ազգային Ժողովի պատգամաւոր,
Արժանապատիւ Տէր Հայր,
Պատուարժան Հ.Յ.Դ. Բիւրոյի ներկայացուցիչ,
Յարգարժան Հ.Մ.Ը.Մ.ի Կեդրոնական Վարչութիւն,
Յարգելի հիւրեր եւ ներկաներ,
Սիրելի քոյրեր եւ եղբայրներ,

Համա-Հ.Մ.Ը.Մ.ական Յրդ ընդհանուր բանակումի խմբապետական կազմի եւ գործադիր մարմնի անունից ողջունում եմ բոլորիդ Հ.Մ.Ը.Մ.-Հ.Ա.Ս.Կ.ի այս գեղատեսիլ բանակավայրում, որն արդէն երրորդ անգամ անընդմէջ իր գրկին է

բացում աշխարհասփիւռ հայութեան մասնիկը հանդիսացող Հ.Մ.Ը.Մ.ական արի-արենոյնների առջեւ՝ բանակելու, գործելու... նաեւ վայելելու հայրենեաց հողի վրայ գտնուելու տասնօրեայ բերկրանքը: Ուստի եւ պատահական չէ ընտրուած այս բանակումի կարգախօսը՝ «Գործենք միասնաբար»:



ՊԱՅՔԱՐԸ ԴԱԴԱՐ ՉԻ ՀԱՆԴՈՒՐԺՈՒՄ

(Հ.Մ.Ը.Մ.Ի ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՁՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄ
ԵՂԲ. ՅԱՐՈՒԹԻՒՆ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆԻ ԱՐՏԱՍԱՆԱԾ ԽՕՍԲԸ՝
ԾԻԾԵՌՆԱԿԱԲԵՐԴԻ ՅՈՒՇԱՀԱՄԱԼԻՐԻՆ ՄԷՁ)

Միրելի համա-Հ.Մ.Ը.Մ.ական Յրդ բանակումի մասնակիցներ,

Չի եղել եւ չի կարող լինել մի դէպք, որ Հ.Մ.Ը.Մ. իր ձեռնարկներում չյիշատակի եւ չյարգի մեր անմեղ նահատակների յիշատակը: Չի եղել եւ չի կարող լինել, որովհետեւ իւրաքանչիւր Հ.Մ.Ը.Մ.ական իր կենսագրութեան մի հատուածում անպայման առնչուում է դաժան իրողութեան հետ, որ տեղի ունեցաւ նախորդ դարասկզբում: Այստեղ կանգնածներիցս գրեթէ բոլորիս մեծ մայրերը կամ մեծ հայրերը անցել են դաժան մահուան արհաւիրքի միջով: Այլպէս ինչո՞ւ մենք Սփիւռք ունենք, ինչո՞ւ թողած մեր բնօրրանը փոխուած ենք աշխարհով մէկ: Սփիւռքը մեր ողբերգութիւնն է, այլ ոչ՝ հպարտութիւնը: Բայց եթէ թաղանից ծնուած Սփիւռքը նաեւ մեր ուժն է, մեր պայքարի, մեր պահանջատիրութեան մարմնակերպումը:



Միրելիներս,

Այսօր մեր կուռ շարքերով եկել ենք այստեղ, այս սրբացած վայրում, յարգանքի տուրք մատուցելու մեր մէկուկէս միլիոն եւ աւելի նահատակների յիշատակին:

Այսօր այստեղ ենք՝ վերանորոգելու մեր ուխտը:

Այսօր այստեղ ենք՝ միասնաբար հաստատելու, որ մենք ոչինչ չենք մոռանում: Այսօր այստեղ ենք, որ մէկ անգամ եւս հաւաստենք աշխարհին, որ ո՛չ մի քաղաքական կեղտոտ ուզ-

մաժարական դաշինք չի կարողանալու ազդել եւ մոռացութեան մատնել մեր ողբերգութիւնը, մեր Դատը, մեր պահանջատիրութիւնը: Ոչ մի ճնշում՝ լինի արտաքին կամ ներքին, ի գորու չէ ազգի գիտակցութեան միջից ջնջել, մոռացութեան մատնել այն ինչ կատարուել է մեզ հետ: Հայրենիքը չի սկսուում ստամոքսից եւ չի աւարտուում կարծամիտ ուղեղների ծայրերի խաչմերուկում:

Միրելի սկառտներ,

Ես տեսնում եմ յուզուած դէմքեր, տեսնում եմ ձեր աչքերի արցունքը, զգում պաղ արցունքի ջերմութիւնը: Պէտք չէ սգալ, սուգն անցեալում է մնացել: Սուգը թաղուեց մեր անթաղ նահատակների մարմիններում եւ մեզ յորդորեց պայքարել: Մեր սուգը դարձաւ յարատեւ պայքարի խորհրդանիշը, որ էլ երբեք չսպանւի: Պայքարը անընդհատ է, ամէնուր եւ ամէն տեղ: Այս օրերին երբ հաւաքուել ենք մեր հայրենի բանակավայրում, չենք դադարելու պայքարելուց եւ դադար չենք վերցնելու: Պայքարը դադար չի հանդուրժում: Ուստի, մեր վառած խարոյկի լոյսը տեսանելի կը դարձնենք Արարատ լեռան ստորոտին բազմած հրէշին եւ կը փաստենք իր նպատակի անանկութիւնն ու մեր յարատեւութիւնը, իսկ հայրենեաց մեղմ քամին կը տանի եւ սուրբ լեռան լանջերին կը հասցընի մեր խրոխտ երգի ձայնը՝ «Յառա՛ջ, նահատակ ցեղի անմահներ»:

Ուրեմն, յառա՛ջ, ուրեմն պայքա՛ր, ուրեմն յաղթանա՛կ:



չրջաններին, դա մեր փափաքն է, սակայն չի ստաց-
ւում, այսինքն լինում են պարագաներ որ սկսուտա-
կան գիտելիքները շատ տարբերում են ամենա-
պարզ հրահանգից (օրինակ շատ պարզ օրինակ, յետ
դարձը ձախ կողմէն, իսկ ուրիշներ աջէն են
անում...) մինչեւ ամենաբարդ սկսուտական գիտե-
լիքները, դրա համադրելը մի քիչ դժուար է, որովհե-
տեւ բոլորս տարբեր ականդոյթներ ունենք, օրինակ՝
Լիբանանի եւ Իրանի սկսուտները տարբեր ական-
դոյթներ ունեն, իրենց դրօշակի արարողութիւննե-
րը, հրահանգները որոշակի տարբեր են լինում եւ
այլն:

Դա համադրելը մի քիչ դժուար է, բայց տարինե-
րի փորձառութիւն ունենք այս բանակումներուն,
ուրեմն դա մեր կարեւորագոյն դժուարութիւննե-
րից չի հանդիսացել: Կարծում եմ որ այդ փորձառու-
թիւնը խմբապետական կազմը ունի, գիտի ինչեր պի-
տի անի, որ նման դժուարութիւններ չառաջանան:

**Բանակումի փորձառութենէն թելադրուած, եւ միշտ
ձգտելով բարելաման, ի՞նչ առաջարկներ կը ներկայացնէիք
յառաջիկայի համար:**

- Ես կարծում եմ, որ բաւականի դեռ տեղեր կան որ մենք
կարող ենք բարելաւել: Իմ անձնական կարծիքս է, որ նման
բանակումներու համար 10 օրը շատ երկար է խմբապետական
կազմի համար: Բաւականի դժուար կացութիւն է: 10 օրուան
մենք բանակումներ ենք գնում

չրջանի մակարդակի կամ ասենք
մասնաձիւղի մակարդակի: Բայց
դա խնդիր չի, որովհետեւ գործա-
դիր մարմինը տարիներ իրար հետ
աշխատող անձնակազմութիւններ
են, շատ աւելի հեշտ է որ իրար
հետ կազմակերպեն բանակումը:
Թէկուզ որ ներկայիս շատ ար-
դիւական միջոցներ կան՝ համա-
ցանց, սքայփ, եւ այլն, սակայն
շատ դժուար է, որ տարբեր
ափերից, տարբեր փորձառու-
թիւնների խմբապետներ նման
10օրեայ բանակումներ կազ-
մակերպեն: Առնուազն մի քանի
տարբեր համա-Հ.Մ.Ը.Մ.ական
բանակումների մասնակցել եմ, տարբեր պատասխա-
նատուութիւններ եմ ունեցել, սակայն կարծում եմ որ այս
գործադիր մարմինը շատ լաւ իրար հետ աշխատեց, համա-
գործակցեց, բայց դեռ տեղեր կան որ կարող ենք աւելի բարե-
լաւել: Մրազբային առումով ես կարծում եմ որ որոշ շրջապ-
տոյտներ կան, որոնց պէտք է վերանայինք, ի՞նչպէս անենք,
որ սկսուտներին արեւի տակ շատ չպահենք: Կամ՝ որոշ օրի-
նակներ տամ, մենք գնացինք Սարդարապատ, հոն երգեցինք,
տողանք առեցինք, բայց առիթը չեղաւ որ մենք սկսուտնե-



րին բացատրենք, որ ինչո՞ւ ենք Սարդարապատ, թէ ի՞նչ յատ-
կանական նշանակութիւն, կարեւորութիւն ունի Սարդարա-
պատը, ի՞նչ կարեւորագոյն էջ է Սարդարապատը, Բաշ Ապա-
րանը, Ղարաքիլիսան: Ինձ թւում է, որ շատ աւելի ուսուցո-
ղական կը լինի եթէ նման ձեւով մենք մօտենանք մեր որոշ
չրջապատոյտներին: Շատ բաներ նախապէս չենք պատկերաց-
նում, բայց երբ տեղի վրայ ըլլանք արդէն կ'անդրադառնանք
եւ պարտաւոր ենք յաջորդին սրբագրել:

Յայտագրի առումով բաւականի բաներ կան, որոնք կա-
րող ենք բարելաւել, կարեւոր չէ ո՞ր երկրում, Հայաստան
կամ այլ:

**Իբրեւ բանակումի ընդհա-
նուր խմբապետ ի՞նչ կը թելադ-
րէիք:**

- Բանակողներին կը խնդրէի
որ վերանային սկսուտական
իրենց ապագան, փորձեն վերա-
նորոգել իրենց սկսուտական
գիտելիքները:

Կարծում եմ որ ժամանակը
եկել է Հ.Մ.Ը.Մ.ի, որ իմ տարիքի
եւ համատարիք իմ նման սկսուտ-
ները արդէն դեկը տան մեզանից
մի սերունդ ներքեւ սկսուտներին
եւ անոնք արդէն այս գործին անց-
նեն: Ուրեմն իմ խրատս այն է, որ
միւս սերունդը գայ, դեկը առնի
Հ.Մ.Ը.Մ.ի սկսուտութեան եւ նոր էջ սկսի գրել Հ.Մ.Ը.Մ.ի
սկսուտական պատմութեան մէջ:

**Մէկ բառով, ի՞նչպէս կը բնորոշէիք համա- Հ.Մ.Ը.Մ.ական
Ցրդ ընդհանուր բանակումը:**

- Համագործակցութիւն:





ԲԱՆԱԿՈՒՄԻ ԳՈՐԾԱԳԻՐ ՄԱՐՄՆԻ ՄՆԳԱՄՆԵՐՈՒՆ ՏՊԱԻՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Նյու-Էմիլ Տէր Գէորգեան (Արեւմտեան Մ. Նահանգներ).-
Շատ ուրախ եւ հպարտ եմ, որ առիթը ունեցայ ծառայելու մեր սիրելի սկաուտներին, համա- Հ.Մ.Ը.Մ.ական ծրագրի բանակումին:

Ետ նայելով, այդ օրերը որ լեցուն էին սկաուտական տարբեր աշխատանքներով եւ տեսարժան զանազան վայրերու այցելութիւններով, ամէնից տպաւորիչ յուշերը այն խանդավառութիւնը եւ ժպիտներն էին մեր սկաուտների երեսներին:

Այս բանակումը յաջողեց հասնել իր շատ կարեւոր նպատակին, որն էր հաւաքել, մտերմացնել եւ զօրացնել ազգային եւ Հ.Մ.Ը.Մ.ական ոգին մեր երիտասարդների մէջ: Յաջողութիւն եմ մագլթում բոլոր պատուիրակութիւններին:

Քոյր Թայլին Օրտոդեան (Վերանան).- «Գործենք միասնաբար»: Նշանաբան մը, որ կրնայ լաւագոյնս բնորոշել համա-Հ.Մ.Ը.Մ.ական ծրագրի ընդհանուր բանակումը:

Նշանաբաններ յաճախ կ'օգտագործուին: Երբեմն կ'ըլլան պատահական, երբեմն այլ կը վերածուին գործի: Այս երկրորդն է, որ յատկանշեց 2010ի բանակումը: Արդարեւ, տասնօրեայ բանակումին ընթացքին բացայայտ երեւոյթ էր գործակցութիւնը թէ՛ բանակումի խմբապետական կազմի անդամներուն միջեւ, թէ՛ այդ կազմին եւ շրջաններու պատուիրակութիւններու խմբապետներուն միջեւ: Աշխատանքը հեզասահ ընթացաւ եւ հասաւ իր յաջող աւարտին՝ շնորհիւ այդ

գործակցութեան: Գործակցութեան ոգին կարելի էր տեսնել եւ զգալ նաեւ բանակումին մասնակցող բոլոր սկաուտներուն միջեւ:

Երբ աշխարհի տարբեր շրջաններէն հայրենի հողին վրայ կը մէկտեղուին 555 հայ պատանիներ եւ երիտասարդներ, որոնք տասը օրերու ընթացքին կը մոռնան, որ իրենք այս կամ այն երկրէն եկած ամերիկահայեր, լիբանանահայեր, պուլկարահայեր, աւստրալահայեր... են եւ կը հաւատան, որ իրենք միայն ՀԱՅԵՐ են առանց մակդիրներու՝ այն ատեն կարելի է անվարան հաստատել, թէ՛ այս բանակումը հասած է իր նպատակին:

Իբրեւ խմբապետական կազմի անդամ կրնամ պարզապէս հաստատել, որ ամիսներու վրայ կատարուած ծրագրումի աշխատանքին որպէս արդիւնք պատրաստուած ծրագիրը ամբողջութեամբ գործադրուեցաւ՝ առանց նկատելի շեղումերու: Բանակումին յաջողութիւնը կամ ձախողութիւնը սակայն կազմակերպող խմբապետական կազմը չէ, որ պիտի հաստատէ, այլ՝ բանակումին մասնակցող արիւնքն ու արեւնոյշներն են, որոնք ըսելիք պիտի ունենան: Իրենք են, որ իրենց յուշերով ու յիշատակներով վերադարձան իրենց երկիրները: Իրենք են որ նոր բարեկամութիւններ հաստատեցին եւ իրենք են որ իրենց ստացած շունչն ու ոգին պիտի փոխանցեն ուրիշներու: Եթէ անոնք նոր շունչով վերամիացան իրենց խումբերուն եւ Հ.Մ.Ը.Մ.ի սկաուտութեան երթին յարատե-

ուղեկան նպաստեցին՝ ահա այն ատեն իսկապէս յաջողած կը նկատուի Յրդ ընդհանուր բանակումը:

Նյը- Ռոմանոս Պետրոսեան (Հայաստան).- Ընդհանուր առմամբ բանակումը համարում եմ կայացած եւ որ շատ աւելի կարեւոր է, յուսամ բոլոր մասնակից շրջանների յառաջիկայ գործունէութեան մէջ ան կը ծառայի իր նպատակին:

Բանակումը ընդհանուր առմամբ անցաւ խիստ բովանդակալից, կազմակերպական դժուարանցանքի փուլերով եւ հանգրուաններով, ինչը պայմանաւորուած էր այն հանգամանքով, որ մի շարք բուն սկաուտական ձեռնարկներ առաջին անգամ կիրարկուեցան այս բանակումի մէջ՝ ռալի բանակումը, երկրների ներկայացման միջոցառումը, ինչպէս նաեւ սկաուտական մրցութիւններն ու մտաւոր խաղերը:

Ես հպարտ եմ, որ Յրդ բանակումի ընդհանուր հերթապահն էի, յուսամ որ արդարացրեցի իմ վրայ դրուած մեծ վստահութիւնը եւ իմ խորին շնորհակալութիւնն ու սէրն եմ արտայայտում բանակումի խմբապետական գործադիր կազմին եւ բոլոր մասնակիցներին:

Սրտի թրթիռով սպասում ենք համա- Հ.Մ.Ը.Մ.ական յաջորդ բանակումին:

Քոյր Սեդա Պէչեան (Արմանան).- Համա-Հ.Մ.Ը.Մ.ական հաւաք, բանակում, ձեռնարկ միշտ լաւ տպաւորութիւն ձգած են վրաս: Այս բանակումը նոյնպէս: Սակայն այս անգամ երբ տեսայ սկաուտներու մօտ խանդավառութիւնը, գիտակցութիւնը, գոհացած ըլլալը եւ սկաուտական բարձր ոգին, կրնամ ըսել թէ Հ.Մ.Ը.Մ. տակաւին իր առաքելութեան մէջ է եւ կը շարունակէ ըլլալ դաստիարակիչ վայր: Բանակումը կը կարծեմ հասաւ իր նպատակին («Գործենք միասնաբար»), երբ 555 սկաուտներ կարողացան մէկ շաբթուան մէջ գործել միասնաբար, առանց խտրութեան, մեկնելով Հ.Մ.Ը.Մ.ի վեհ սկզբունքներէն: Արձագանդը մեծ է, վարձքը կատար իւրաքանչիւր Հ.Մ.Ը.Մ.ականի, որ տարբեր ձեւերով իր



մասնակցութիւնը բերաւ այս բանակումին յաջողութիւն: Յաջողութիւն եւ շնորհակալութիւն Հ.Մ.Ը.Մ.ի մեծ ընտանիքին:

Նյը- Զարեհ Մովսէսեան (Արեւմտեան Մ. Նահանգներ).- Շատ ուրախ եմ, որ առիթը ունեցայ մասնակցելու համա-

Հ.Մ.Ը.Մ.ական Յրդ բանակումին, իբրեւ գործադիր մարմնի անդամ:

Տարիներ առաջ երբ ես սկաուտ էի, նման անձեր եղան որ կատարեցին ինձ համար այն, ինչ որ ես փորձեցի կատարել ներկայ սկաուտների համար: Հպարտ եւ ուրախ եմ, որ կարողացայ մասնակցել այս բանակումին, հայրենիքի մէջ, նորից տեսնելով հին ընկերների, ծանօթանալով նորերին, որոնք իմ հետ պիտի մնան



Հարաւային Ամերիկայի սկաուտներ կ'երդնուն վեհաշուք Արարատին:

**Եղբ. Անտրէ Յովսէփեան (Հ. Մ. Նա-
յիրի միութիւն, Իրան).-** Տպաւորուած
եմ այս սկառտական աշխատանքնե-
րից: Բանակումը տարուէ տարի կը բա-
րելաւուի մակարդակի, բանակավայրի
իմաստով:

**Եղբ. Յակոբ Զպլաքեան (Ախրա-
նան).-** Այս բանակումը աւելի կեդրոնա-
ցած է սկառտական գիտելիքներու
վրայ, քան՝ գրօսաշրջիկական պտոյտ-
ներու: Ընդհանրապէս խմբակային
դրուածեան ոգին է որ կը տիրապետէ,
եղբայրական մթնոլորտի մէջ:

Մեր շրջանի սկառտները հասկցան
որ իրենք միակ Հ.Մ.Ը.Մ.-ականները
չեն աշխարհի վրայ: Տարբեր շրջաններէ
Հ.Մ.Ը.Մ.-ական քոյրեր եւ եղբայրներ
նոյն գիտելիքները ունին: Նաեւ՝ իրենց
համար շօշափելի դարձան պատմու-
թեան մէջ իրենց սորված գիտելիքները:

**Եղբ. Ակուստին Անաբեան (Արժան-
թին).-** Այս բանակումը սկառտական
բովանդակութիւն ունի եւ այս շատ հա-
ճելի է մեր բոլորին համար:

Մաղկածորի մէջ եղած խմբապետա-
կան համագումարին առաջարկեցինք,
որ բանակումը աւելի սկառտական ըլ-
լայ: Կը նկատենք, որ խմբապետական
գործադիր մարմինը շատ լաւ կազմա-
կերպած է այս բանակումը, իբրեւ
սկառտական բանակում՝ մրցումները,
ուսլին, արշաւները, արարողու-
թիւնները, լման տարագները, շատ լաւ
են:

Մեր շրջանի սկառտները կը կարծէ-
ին, որ պիտի չկարենային կատարել
սկառտական բոլոր հրահանգները՝
վրաններու քննութիւն, տարագ... բայց
վարժակեցան եւ կը սորվին: Շատ լաւ յի-
շատակներով պիտի մեկնինք բանակու-
մէն:

Եղբ. Աւետիս Տէրվիչեան (Մուրիա).-
Բանակումին նախապատրաստական
կազմակերպչական աշխատանքները
շատ լաւ են:

Մեր շրջանի սկառտները այս բանա-
կումին սորվեցան միութենական հան-
դուրժողականութիւն: Սորվեցան գի-



րար մտիկ ընել, հանդուրժել, ուրիշին
կարգ տալ, սպասել: Այլ շրջաններու մէջ
ուրիշ քոյր-եղբայրներ նոյն դրօշին
տակ կը ծառայեն, անոնց փորձառութե-
նէն եւս օգտուեցան:

**Քոյր Ալին Պաղտասարեան (Արեւել-
եան Միացեալ Նահանգներ).-** Բանակու-
մին մթնոլորտը շատ խանդավառ է:
Կազմակերպուած յայտագիրները, ու
մանաւանդ ուսլին առիթը ընծայեցին
սկառտներուն խմբակային դրուածիւն
կիրարկելու եւ իրենց սորվածները զար-
գացնելու:

Կը փափաքինք որ այս բանակումին

մասնակիցները իրենց հետ տանին եղ-
բայրական ոգի, որովհետեւ առաջին
անգամ մասնակցող սկառտները ընդ-
հանրապէս այլ շրջաններու սկառտնե-
րու հետ շփման մէջ չեն մտած եւ մշա-
կութային որոշ տարբերութիւնները,
զանազան երկիրներու հետ, երբեմն
կրնան որոշ հեռաւորութիւն մը, տար-
բերութիւն մը ստեղծել: Այս բանակում-
ներուն նպատակը այդ տարբերութիւն-
ները հարթել է եւ Հ.Մ.Ը.Մ.-ական ոգին
զօրացնել:

**Եղբ. Պօղոս Մահպուլեան (Ֆրանս-
սա).-** Այս բանակումը, համեմատելով



ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԽՄԲԱՊԵՏՆԵՐԸ ՀԱՄԱ-Հ.Մ.Ը.Մ.ԱԿԱՆ ԶՐԴ ԲԱՆԱԿՈՒՄԻՆ ՄԱՍԻՆ

նախորդ բանակումներուն, կազմակերպչական իմաստով յառաջդիմութիւն արձանագրած է եւ մակարդակը բարձրացած է ամէն մարդէ ներս:

Բանակավայրէն ներս աւելի երկար մնալը առիթը տուաւ իրարու ծանօթանալու եւ մտերմանալու: Արի-արենոյները չփում ունեցան տարբեր շրջաններու քոյր-եղբայրներու հետ, իրենց ընկերական եւ սկառտական շրջանակը յայցաւ:

Եղբ. Արթո Սթեֆանոֆ (Պուլկարիա).- Շատ հաճելի բանակում մըն է: Մեր սկառտները նոր ծանօթութիւններ

ունեցան, ուրախ են, որ Հայաստան կը գտնուին, այցելեցին պատմական տեղեր:

Քոյր Մելինէ ձէյքոպ (Անգլիա).- Շատ լաւ կազմակերպուած, դասաւորուած, յստակ ծրագիրներ ունեցող բանակում մըն է: Բանակողներուն առիթ տրուեցաւ իրարու հետ չփում ունենալու եւ ծանօթանալու:

Եղբ. Սեւան Կորկիսեան (Հոլանտա).- Բանակումին միջնորդողը շատ խանդավառ է: Սկառտները սորվեցան նոր գիտելիքներ, հաւաքական աշխատանք,

եղբայրական կեանք, աւելի մօտեցան Հ.Մ.Ը.Մ-ի գաղափարներուն ու հաստատեցին ընկերական կապեր:

Եղբ. Ռուբէն Նալպանտեան (Երուսաղէմ).- Այս տարուան բանակումին առաւելութիւններէն է սկառտական խաղերու թիւին բարձրացումն ու բանակավայրէն ներս աւելի երկար մնալը, որուն շնորհիւ սկառտները իրարու կը մօտենան, կը ծանօթանան:

Այս բանակումէն մենք սորվեցանք ճշդապահ ըլլալ, մեր մէջ զօրացաւ նաեւ պատասխանատուին հանդէպ յարգանքի ոգին:



Նղբ. Գրիգոր Պաթմանեան (Շը-ւէտ). - Այս բանակումին սկաուտական բաժինը աւելի շեշտուած է: Տարբեր երկիրներու միջեւ մրցակցութիւնները օգտակար են եւ կը նպաստեն զարգացման:

Մեր սկաուտները թէ՛ սկաուտական եւ թէ՛ ընկերային գետնի վրայ նորութիւններ սորված պիտի վերադառնան:

Նղբ. Ռոմիկ Դանիէլեան (Հ. Մ. Արատ Կազմակերպութիւն, Իրան). - Այս բանակումին շատ դրական են արդիւնքները, նախկին բացերը լրացուած են,

դա նշանակում է, որ ժողովները, հանդիպումներն ու սեմինարները, որոնք տեղի ունեցած են, դրականօրէն ազդած են որոշումներուն վրայ:

Բանակումը շատ ազդեցիկ է, տարբեր երկրների եւ պատուիրակութիւնների համար, մանաւանդ Իրանի պատուիրակութեան համար, որովհետեւ սկաուտները շատ նախանձախնդրօրէն կը մասնակցեն այսպիսի բանակումների, նկատի ունենալով որ մեր մօտ ընդունուած չէ այսպիսի աշխատանք:

Այդ պատճառով է, որ Իրանը գրկաբաց կ'ընդունէ նման աշխատանքներ:

Շատ տպաւորուած ենք, որովհետեւ շատ բան կը փոխանցուի մեր մասնակիցներին, եւ տարբեր յարաբերութիւններ կը ստեղծեն օտար երկրների ըսկաուտների հետ:

Նղբ. Թադէ Մեհրապեան (Միփան միութիւն, Իրան). - Միասնական սկաուտական կեանքը օգտակար կը դառնայ սկաուտներուն համար: Այս բանակումին մեզի փոխանցուածը, նոր սորվածները, մեր կարգին մենք ալ պիտի կարենանք փոխանցել ուրիշներու:



«Հայր մեր, որ յերկինս ես...»

Նղբ. Յարութ Պաղամեան (Նրուսաղէմ). - Այս բանակումը շատ տարբեր է նախորդներէն: Ծրագիրները՝ դաստիարակչական, ընկերային, ինչպէս նաեւ խաղերը շատ աւելի հարուստ են:

Ոչ ոք պիտի մոռնայ այս բանակումը: Ռային շատ լաւ էր, գիւղ մը մտնել եւ ժողովուրդին հետ հանդիպել, ժամեր գիւղացիներուն մօտ ըլլալը հաճելի էր:

